№ 18 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 27 ՅՈՒՆՎԱՐԻ

1910

ԵՐԵՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 27 ՅՈՒՆՎԱՐԻ № 18

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул., № 5.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Խմբագրատան տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տպարանի տելեֆոն № 228

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ
ՆԵՐԿԱՅ 1910 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(38-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, 11 ամսվանը նոյնպէս 10 ր., 10 ամսվանը՝ 9 ր., 9 ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., 7 և 6 ամսվանը՝ 6 ր., 5 ամսվանը՝ 5 ր., 4 ամսվանը՝ 4 ր., 3 ամսվանը՝ 3 ր., 1 ամսվանը՝ 80 կ. և 20 կ. պօստի ծախք։

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի. Թիւրքիայի բաժանորդները՝ 120 ղրուշ։

Հասցէները փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և միևնոյն ժամանակ 40 կ. նամականիշ։

Ի նկատի ունենալով, որ ուշ բաժանորդագրվելու պատճառով առեղծվում են մի շարք տեխնիքական անյարմարութիւններ, որոնք զրկում են խմբագրութեանը հնարաւորութիւնից յունվարի 1-ից կանոնաւորապէս թերթն ուղարկել բաժանորդներին, ուստի խնդրվում է բաժանորդ գրվել ցանկացողներին վաղօրօք դիմել՝ գրելով հասցէները պարզ և ճշգրիտ։ Հին բաժանորդներից խնդրվում է կցել փոխադր. բլանկի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով։

Մեր հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Հինգշաբթի, յունվարի 28-ին
Կովկասի Գիւղատնտեսական Ընկերութեան դահլիճում
կը կայանայ

Թիֆ. Հայ Գիւղատնտես. եւ Տնայնագ. Ընկերութեան
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ,

Պարապմունքի առարկաները.
1) Ծխախոտագործութիւնը Անդրկովկասում, զեկուցումն Արտ. Էնֆիաճեանի։
2) Մեղուաբուծութեան կարիքները մեզանում, զեկուցումն Արշ. Մխիթարեանի։
3) Ընթացիկ խնդիրներ։

Սկիզբն է երեկոյեան ժամը 7 1/2-ին։
Կարող են ներկայ լինել նաև կողմնակի անձեր։

(չ.հ.) (տո) 101. 2—1.

ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ Է ԵՒ ՄԻՆՉԵՒ ՅՈՒՆՎԱՐԻ 25-ը
Լոյս կը տեսնի

„ԱՐՕՐ“

Ընդհանուր-գրականական, գեղարուեստական եւ գիտական ամսագիր

Յունվարի համարը բաղկացած 6 թերթից (192 էջերից in quarto)։ Բաժանորդագրվել ցանկացողները պէտք է շտապեն վաղօրօք ստորագրվել։ «Արօրի» տարեկան բաժանորդագինն է 6 րուբլի։

«Մշակի» բաժանորդների համար՝ 4 րուբլի։ Արտասահման՝ 20 ֆրանկ կամ 8 րուբլի, իսկ «Մշակի» բաժանորդների համար 13 ֆրանկ կամ 5 րուբլի։

Ծանօթ.—Գաւառներից «Մշակի» բաժանորդներից շատերը ուղարկել են «Արօրի» բաժանորդագին՝ 3 ր., փոխանակ 4 րուբլու։ Խնդրվում է ուղարկել պակասորդ 1 րուբլին։

Դրամ և գրութիւն ուղարկել պէտք է՝ Тифлисъ, въ контору газ. „Мшакъ“. Для передачи редакціи журнала „АРОРЪ“, կամ Tiflis, Rédaction du journal „Mschak“, pour „Aror“. Թիֆլիս, գրասենեակ «Մշակի», յանձնել «Արօրին»։ 0—5

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԵՄԻ ԲԱՂԴԸ

I

Թիֆլիսի հայ Թատրոնի ներկայացումները ապահովված են երեք տարով։

Շնորհիւ Մանթաշեանի խոստացած 4000 րուբլու, Աֆրիկեանի իւրաքանչիւր տարի տրվող 1000 րուբլու և ուրիշ հասոյթների՝ հնարաւոր է ծածկել այն դեֆիցիտը, որ գոյանում է ամեն տարի հայկական Թատրոնական գործից։

Սակայն երեք տարուց յետոյ նորից հանդէս կը գայ Թատրոնի ապահովութեան խնդիրը և նորից անհրաժեշտութիւն կը զգացվի որոնել օժանդակիչ գումարներ։

Իսկ եթէ մենք չենք ցանկանում մշտական մուրացիկի դերի մէջ լինել և այս ու այն բարերարին դիմելու անհրաժեշտութեան մէջ գտնվել, կարևոր է, որ մենք այժմեանից իսկ ձեռնարկենք այնպիսի միջոցների, որոնք յարատև ապահովութիւն ընծայեն Թատրոնական գործին։

Թէ մասնաւոր խօսակցութիւնների, թէ Դրամատիկական Ընկերութեան ընդհանուր ժողովների ժամանակ հանդէս են բերված երկու միջոց՝ ֆոնդ կամ Թատրոնական շէնք—երկու ելք, որոնցից իւրաքանչիւրը պահանջում է կամ հասարակական ժողովարարութեամբ հաւաքված և կամ մասնաւոր նուիրատուութեամբ կազմված գումարներ։

Մի խոշոր Թատրոնական հիմնադրամ կամ մի սեփական հայկական Թատրոն իր բոլոր պարագաներով կարող էին առաջինը իր տոկոսներով, երկրորդը իր ձրի բեմով լուծել հայ Թատրոնական գործի ֆինանսական մասը, ծածկելով իւրաքանչիւր տարի առաջացող դեֆիցիտը կամ նուազեցնելով կատարվող ծախքերը։

Մի յատուկ յանձնաժողով ներկայումս զբաղված է քննելով այն հարցը, թէ ի՞նչ միջոցի վրա կանգ առնել՝ արդեօք ֆոնդ կազմելու թէ՞ շէնքի կառուցման համար գումար հայթայթելու։

Մենք առիթ կունենանք մեր կարծիքները յայտնելու այդ միջոցների մասին, իսկ այսօր մենք հրաւիրում ենք ուշադրութիւն դէպի Թատրոնական գործի ընդհանուր կազմակերպութեան խնդիրները։

Հայ Թատրոնի առաջադիմութեան և բարգաւաճման խոշոր և հիմնական պայմաններից մէկն է նրա դերասանական կազմի և ռեպերտուարի բաւարար որակը։

Դերասանական ույժեր կան մեր մէջ և հնարաւոր է կազմել լաւ խումբ, որը կարող լինէր կատարել ժամանակակից բեմի համար պահանջվող պիէսները։

Թիֆլիսը, ընտրութիւն անելով դերասանների մէջ, անշուշտ, չէ կարող իր բեմի վրա տեղ տալ բոլոր փոքր ի շատէ բարեխիղճ դերասաններին, և վերջիններիս մի մասը կը մնայ բոլորովին դուրս Թիֆլիսի բեմից։ Այդ դերասանները պէտք է զբաղմունք գտնեն ուրիշ քաղաքների բեմերի վրա, եթէ կան այդպիսիները, կամ անգործ սպասեն, մինչև Թիֆլիսը մի օր իրանց էլ հրաւիրի իր բեմի համար, անգործ Թողնելով հին աշխատաւորներին։

Իսկ եթէ Թիֆլիսի Հայ Դրամատիկական Ընկերութիւնը նախաձեռնութիւն վերցնէր իր վրա միացնելու մի քանի քաղաքների հայկական ներկայացումների գործը և դասաւորէր դերասանական ույժերը այնպիսի կարգով, որ կարողանար օգտվել թէ հին և թէ նոր ընդունակութիւններից, նա կը լուծէր դերասանական գործողների սրտամաշ խնդիրներից մէկը, այն է՝ ապահովել մշտական զբաղմունք բեմի պաշտօնեաների համար։

Միացնելով դերասանական ույժերը՝ թէ Թիֆլիսը և թէ միւս քաղաքները կը շահվէին միանգամայն և հնարաւոր կը լինէր այդ ույժերի մէջ փոխանակութիւն կատարել։

Եւ ռեպերտուարը, որ այժմ ամեն տարի նորից կազմվում է Թիֆլիսի համար, նոյն տարում կարող էր ծառայել նաև միւս բեմերի համար, չը կորցնելով իր Թարմութիւնը և նշանակութիւնը։

Թիֆլիսը նախ և առաջ պէտք է կապվի Բագուի, ապա և ուրիշ քաղաքների հետ, միացած ույժերով առաջ տանելու Թատրոնական գործը։ Եւ եթէ դրա համար նպատակայարմար ճանաչվի, որ Թիֆլիսի Դրամատիկական Ընկերութիւնը ունենայ Բագւում իր ճիւղը, այդ էլ դժուար չէ աջողեցնել ներկայումս, երբ կանոնադրութիւնների բարեփոխութիւններ անելը դիւրացված է բաւականաչափ։

Երկու քաղաքի հայ ազգաբնակութեան միացած ույժերը հնարաւորութիւն կը տան հայ Թատրոնի կազմակերպութեան ծանրութիւնը մի որոշ չափով թեթևացնել։

Ա. Քալանթար

ՂԱՐԱԲԱՂԻ ԹԵՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԸ

Ղարաբաղի թեմի ազգային և եկեղեցական գործերը և հայ ժողովրդի պահանջներն ու կարիքները ահագին և բազմազան են։

Տնօրինելու և կարգաւորելու ամենաառաջին և անհրաժեշտ գործերն են կալուածականը և դպրոցականը։ Մօտ 300,000 հոգի ժողովուրդ ունեցող հայ թեմի միակ ազգային միջնակարգ կրթարանը՝ Շուշու սեմինարիան է, որ մատնված է նիւթական անապահովութեան և նիւթական միջոցների սղութեան պատճառով չէ կարողանում բարգաւաճել ինչպէս հարկ է և գոհացնել մատաղ սերնդի մտաւոր և բարոյական-հոգևոր պահանջները։ Անկարգ և քաօսական դրութեան մէջ են նաև թեմի գիւղական-ծխական դպրոցները։ Թեմի քահանաների մեծ մասը, սակաւ բացառութեամբ, տգէտ և անկիրթ մարդիկ են։ Տգիտութիւնը, նրա հետ միացած և բարքերի անբարոյականացումը—արդիւնք զանազան ինքնակոչ և համբակ գործիչների վնասակար գործունէութեան—ընդհանուր քայքայումն են առաջ բերել հայ ժողովրդի մէջ։

Վանքական ահագին և բազմարժէք կալուածների տնտեսութիւնը և կառավարութիւնը այնպիսի քայքայման վիճակի մէջ է, որ միլիոններ արժող կալուածներն այսօր ենթարկված են աճուրդով և չնչին գնով վաճառվելու վտանգին, պետական տուրքերն ամբողջ մի քանի տարիների ընթացքում չը վճարվելու պատճառով։

Նիւթական և բարոյական վնասները, որ կրել է թեմը վերջին տարիների ընթացքում՝ թէ ապիկար և վնասակար գործիչների, թէ հոգաբարձութիւնների և հոգևորականների պատճառով, ահագին է։ Եթէ ճիշդ լինի նոյնիսկ մեր Թղթակցի այն կարծիքը («Մշակ» № 16), թէ առաջնորդ Աշոտ եպիսկոպոսը շատ սիրելի էր ժողովրդին—այդ կարծիքը մենք սխալ ենք համարում, այլապէս ժողովուրդը գանգատ չէր ներկայացնի Կաթողիկոսին—բայց հէնց այն հանգամանքը, որ Թղթակիցն ինքն էլ չէ ուրանում, այն է՝ առաջնորդի միակողմանիութիւնը և կուսակցականութիւնը, անշուշտ, առաջ է բերել որոշ քայքայումներ և վնասներ, որոնց դարմանումը երկար ժամանակի գործ է։

Այս ամենը ցոյց է տալիս, որ Արցախի թեմը, Ղարաբաղը պէտք ունի ահագին վերանորոգութիւնների։ Իսկ վերանորոգութիւնների, բարեփոխումների, կարգաւորման և կազմակերպման համար հարկաւոր են կարող ույժեր և ղեկավարող մարմիններ։

Այժմ պէտք է կատարվեն նոր առաջնորդի, թեմական դպրոցի նոր հոգաբարձութեան և թեմական խորհրդի անդամների ընտրութիւնները։ Այդ ընտրութիւնների հետևանքից է կախված և թեմի ամբողջ բաղդը։ Եթէ ընտրվի մի արթուն, ժիր, գործունեայ և զօրեղ ու մաքուր նկարագրի տէր առաջնորդ, տոգորված ժողովրդին ծառայելու անկեղծ սիրով, եթէ ընտրող ժողովուրդը, գիտակցելով իր պարտականութիւնը, աշխատի վտարել ասպարէզից անարժան և շահասէր գործիչներին, որոնք, իբրև հոգաբարձու, իբրև այլ պաշտօններ ունեցող, ի նկատի են ունեցել մինչև այժմ ամենից առաջ ոչ թէ խեղճ և Թշուառ ժողովրդի շահերը, այլ իբրև ոչխարագեստ գայլեր, պարարել են միայն իրանց անձը և իրանց կուսակցական շահերը գերիվերոյ են դասել ազգային շահերից, եթէ ընտրող ժողովուրդը աշխատի հոգաբարձութեան և թեմական խորհրդի անդամակցութեան կոչել ազնիւ, շիտակ, ժողովրդասէր և կարող ու ձեռնհաս անձանց, յոյս կայ, թէ գործերը դեռ կարող են կարգաւորվել և ուղիղ ու կանոնաւոր ճանապարհի մէջ մտնել։

Գալով ընտրութիւններին, մենք միանգամայն արդարացի ենք գտնում ժողովրդի տրտունջը և դժգոհութիւնն այն մասին, որ ընտրութիւնները նշանակված են հրաժարված առաջնորդի ձեռքով։ Այժմ, երբ առաջնորդի հրաժարականը արդէն ընդունված է, Էջմիածնի սինօդի անմիջական պարտաւորութիւնն է ուղարկել մի եկեղեցական, իբրև թեմի ժամանակաւոր կառավարիչ, և նշանակել անմիջապէս թեմական պատգամաւորների ընտրութիւն ամբողջ թեմում։ Թեմական պատգամաւորական ժողովին պէտք է յանձնել կատարել. 1) առաջնորդացուների, 2) թեմական դպրոցի հոգաբարձութեան և 3) թեմական խորհրդի անդամների ընտրութիւն։ Հարկ չը կայ, ի հարկէ, առանձին-առանձին թեմական պատգամաւորական ժողովներ գումարել, ի նկատի ունենալով այդպիսի ժողովներ գումարելու դժուարութիւնները Ղարաբաղի պէս՝ հաղորդակցութեան յարմարաւոր միջոցներից զուրկ մի թեմի համար, այլ կրկնում ենք, առաջուց յայտարարել, որ ընտրվեն պատգամաւորներ երեք ընտրութիւնների համար միաժամանակ։

Եւ եթէ մեծ պասին նշանակվեն պատգամաւորների ընտրութիւնները, Զատկից յետոյ կարելի կը լինի գումարել պատգամաւորական ժողովը, որ կը կատարէ առաջնորդի, հոգաբարձութեան և թեմական խորհրդի ընտրութիւնները։ Ամեն մի ընտրական շրջան կամ յաջորդութիւն, գործակալութիւն կարող է իր շրջանի պատգամաւորի ընտրութեան ժամանակ քննութեան առարկայ դարձնել կանդիդատների հարցը և ըստ այնմ հրահանգ տալ իր ներկայացուցչին։

Հ. Առաքելեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Գանձակ, 25 յունվարի

Պարզվեց, որ յունվարի 22-ին Շուշում երևան հանված զէնքերի պահեստում եղել են 73 ռումբ, բաւականաչափ բռնկվող սնդիկ, վառօդ, փամփուշտներ, գործիքներ, հայերէն գրութիւններ։ (Հ. Գ.)

Պարիզ, 25 յունվարի

Մինիստրների խորհուրդն այսօր ընդունեց նաւակառուցման ծրագիրը, որի համաձայն ռազմական նաւատորմը բաղկանալու է 28 զրահանաւերից, 10 առաջաւոր նաւերից, 52 ականանաւերից. ծովափի պաշտպանութեան նաւատորմի համար՝ 94 ստորջրեայ նաւակներ. արտասահմանեան ծառայութեան համար՝ 10 նաւ։ Նաւատորմը բաժանվելու է երկու ռազմական միութիւնների։ (Հ. Գ.)

Բեռլին, 25 յունվարի

Համագերմանական դաշնակցութիւնը երէկ ժողով գումարեց՝ պարզելու դաշնակցութեան վերաբերմունքը դէպի բէյն-վեստֆալեան բաժանմունքի պետական կանցլերին ուղարկած նամակը։ Որոշվեց տեղեկացնել կանցլերին, որ դաշնակցութիւնը թէև պարսաւում է նամակի ձևը, սակայն նրա բովանդակութեան հետ, որով դժգոհութիւն է յայտնվում Գերմանիայի արտաքին քաղաքականութեան առիթով, բոլորովին համաձայն է։ (Հ. Գ.)

Ուլվերհէմպտօն, 25 յունվարի

Գիշերս այրվեցին Բէյլիս երկաթուղային գործարանները։ 3000 մարդ մնացին առանց աշխատանքի։ (Հ. Գ.)

Պեկին, 25 յունվարի

Անգլիական դեսպանին յանձնարարված է յայտնել չինական կառավարութեան, որ Չինաստանը անկարող է վերջնական կերպով լուծել Ցզինչժօու-Այգունի երկաթուղու հարցը, նկատի չառնելով Ռուսաստանի և Ճապոնիայի շահերը և չը խորհրդակցելով այդ պետութիւնների հետ։ (Հ. Գ.)

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

Թեհրան, 25 յունվարի

Երէկ հաղորդվեց, որ արտաքին գործերի մինիստր Ալա-ուս-Սալթանէն հրաժարական տուեց։ Այդ հրաժարականը հետևանք էր ձախակողմեանների հարցապնդման մէջլիսում՝ Թաղի-Զադէի ղեկավարութեամբ՝ ռուսական զօրքերը Պարսկաստանում երկար ժամանակ մնալու և այն մասին, թէ ինչպիսի միջոցներ են ձեռք առնված արտաքին գործերի մինիստրութեան կողմից նրանց շտապով հեռացնելու համար։

Ալա-ուս-Սալթանէն պատասխանեց ընդհանուր ֆրազներով և յոյս յայտնեց, որ ռուս զօրքերը շուտով յետ կը կանչվեն։

Մինիստրի պատասխանը խիստ քննադատութեան ենթարկեց Թաղի-Զադէն և ձայնատուութեան ժամանակ մէջլիսը անվստահութիւն յայտնեց Ալա-ուս-Սալթանէին, որ փութաց հրաժարական տալ։ Ըստ երևոյթին, նացիոնալիստները վաղուց դժգոհ էին մինիստրից և օգտվեցին յիշեալ դէպքից նրան գահընկէց անելու։ (Հ. Գ.)

Սպահան.—Այստեղ յուզումն առաջացրեց ֆինանսների մինիստրի այն կարգադրութիւնը, որ տասանորդն առնվի մթերքներից շուկայի գնով և ոչ թէ այն գներով, որոնք նշանակված էին տասը տարի առաջ։ Մինիստրի կարգադրութիւնը մանաւանդ անախորժ է կալուածատէրերին, որոնց մեծամասնութիւնը հոգևորականութիւնն է կազմում։ Համարեա ամբողջ նահանգի կէսը պատկանում է Զիլլ-էս-Սուլթանին, միւսը մուշտէիդ Աղա-Նէջէֆին։ Վերջինը սկսեց ագիտացիա անել հոգևորականութեան օգնութեամբ։ Նրանց կողմից գրգռված ազգաբնակութիւնը պահանջեց տեղական անջումանից վերացնել ֆինանսների մինիստրի որոշումը։ Սարսափահար եղած անջումանը որոշեց չը կատարել մինիստրական կարգադրութիւնը։ Միւս մուշտէիդը, Սէյդ-ուլ-Ուլման, նոյնպէս նախապատրաստում էր ազգաբնակութիւնը ապստամբութեան՝ նոր կառավարութեան դէմ և մինչև անգամ յարաբերութիւններ էր հաստատել աւազակախմբերի հետ, առաջարկելով նրանց կողոպտել կարաւանները։ Նահանգապետ Սարդար-Ջէնգը կալանաւորեց մուշտէիդին, որը քննութեան ժամանակ չէր ծածկում իր հակակառավարչական դիտաւորութիւնները։

Ներքին գործերի մինիստր Սարդար-Ասադը, ռուս-անգլիական նախագծի փոխառութեան առիթով, որը պայման է դնում, որ այդ պետութիւնները կօնտրօլի իրաւունք ունենան ֆինանսների վրա և Ռուսաստանը պէտք է կազմակերպէ ժանդարմերիան Հիւսիսային Պարսկաստանում, այն կարծիքը յայտնեց, որ ժողովուրդը երբեք չի ընդունի այդ պայմանները, և փոխառութեան առաջարկութիւնը առ այժմ անպատասխանի է մնում։ («Р. В.»)

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ ԹՐՔԱՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Վան, 11 յունվարի

Գրել եմ արդէն, որ տեղիս պաշտօնանկված Թիւրք երեսփոխների ղեկավարութեամբ վալի Բէքիր բէյի դէմ հանրագիր-բողոքագիր է պատրաստվում, որպէսզի ամբաստանեն նրան իբրև անկարող ու պաշտօնանկ անեն։ Թիւրքերի այս նպատակը չիրագործվեց, վասնզի հայեր և մասամբ Թիւրքեր էլ վալիին նպաստաւոր հանրագիրներ ուղարկեցին Կ. Պոլիս, պահանջելով որ կարեւորութիւն չը տրվի վալիի դէմ եղած բողոքներին, որոնք յետին մտքեր են պարունակում, ու. պահվի նա իր պաշտօնում, որը վարում է նա արդարութեամբ։

Ազգամոլ ու յետադէմ Թիւրքերը, չաջողելով իրանց յետին մտքերը իրագործել տալու, սկսել են արդէն սկանդալներ սարքել, կողմնակի ճանապարհով հասնելու իրանց նպատակին. ուստի գաւառներում անկարգութիւններ են առաջացնել տալիս, որպէսզի փաստ տան վալիի անկարողութեան։ Այդ նպատակով գործվեցին արդէն Ադիլջէվազի ու Արջաշի ոճրագործութիւնները, որոնց մասին ժամանակին գրել եմ. այդ նպատակով Հիւսէյն փաշան և ընկերներն անցան պարսկական հողը և այդ նպատակով դեռ շարունակվում են գաւառներում զանազան ոճրագործութիւններ։

Սոյն ռէակցիօներ տարրերին խորհրդակից ու գործակից է նաև Թաղուսի աշիրէթի պետը՝ Հիւսէյն բէգ, նոյնչափ բռնաւոր ու յետին մտքեր ունեցող մի մարդ, որչափ բուն իսկ Հիւսէյն փաշան։ Սա անցեալ տարի Ախտուիկ հայ գիւղում սպանել տուեց մի հայ կնոջ ու նրա որդուն և մնաց անպատիժ, իսկ այս տարի էլ հայերի հետ հողային խնդիրներ ունենալով՝ կանչել է իր սենեակում այն գիւղացի հային, որի հետ նա խնդիր ունէր, սաստիկ գանակոծել է և բռնադատել, որ իր բերանով հայհոյէ իր կրօնին։ Մի երկու օրից յետոյ էլ Ախտուիկ գիւղի եկեղեցին սրբապղծում է, մարդկային ապականութիւնից խաչ ձեւացնելով նրա դռան վրայ։

Հայերը և տէրերը, սաստիկ վիրաւորանք զգալով այս անարգանքի համար, փակեցին եկեղեցին ու, Սարա գիւղաքաղաքը հաւաքված, բողոք տուին Վանի կուսակալութեանը այս անլսելի ոճրագործութեան համար։ Վալի Բէքիր բէյ հրամայեց Սարայի կայմակամին քննել գործը, որն անձամբ Ախտուիկ գիւղ երթալով իբր թէ քննել և տեղեկագիր է տուել, որ այդ սրբապղծութիւնը կատարել է ոչ թէ Հիւսէյն բէգ, որ անմեղ աղաւնու նման սուրբ է և արդէն հիւանդ էլ է, այլ նոյն գիւղում գտնվող մի քանի Թիւրքեր, որոնց ձերբակալել ու բանտարկել է։

Թիւրքիայում արդէն միշտ էլ փոքրերն են տուժում մեծերի յանցանքը, մեծերին միշտ խնայում են յայտնի պատճառներով, իսկ նրանց փոխարէն պատժում են փոքրերին, որոնք կամ պարզ գործիքներ են լինում մեծերի ձեռքում և կամ անմեղներ են լինում. բայց որովհետև հարկ է պատժել մէկին, պատժում են անզօրներին և անմեղներին, որոնք իրանց ազատելու հնարաւորութիւնից և միջոցներից զուրկ են։

Տասնեակ տարիներ առաջ Վանի պօստը կողոպտվեց. գողերը քիւրդ յայտնի ցեղապետներից էին և նրանց մօտ գտնվեցին էլ գողօնները, բայց իբրև ոճրագործ ձերբակալվեց մի խեղճ քիւրդ, որ իսպառ զուրկ էր մի այդպիսի խոշոր յանցակութիւն գործելու միջոցներից և հնարաւորութիւններից։ Բայց նա քաշեց մեծերի պատիժը. դատապարտվեց ցմահ բանտ մնալու, թէև մի քանի տարուց յետոյ նրան էլ բանտից փախցրին։ Իսկ Ադանան արդէն յայտնի օրինակ է, ուր խոշոր ոճրագործները, Ջարդի հեղինակները ոչ միայն անպատիժ մնացին, այլ սկզբում մինչև իսկ նպաստներ բաժանելու և արդարադատութիւն կատարելու պաշտօններ էլ ստացան։

Կուսակալը՝ Բէքիր բէյ՝ արդէն յայտնի ասում է. «Ես գիտեմ, որ այս սկանդալներն ում կողմից են սարքվում։ Գիտեմ, որ նրանց հեղինակները բուն իսկ Վանումն են և խորհուրդները բղխում են բուն իսկ քաղաքից. բայց ինչ արած. պիտի փոքր ի շատէ համակերպել, մի կերպ եօլա գնալ, մինչև որ հնարաւորութիւն լինի բուն իսկ վառարանը քանդել և զրկել նրանց՝ ազդելու, գործիքներ գտնելու, սկանդալներ առաջացնելու հնարաւորութիւնից»։ Կուսակալը կասկածում է, որ եթէ խիստ միջոցներ ձեռք առնի Հիւսէյն բէգի և նմանների դէմ, նրանք էլ կանցնեն Պարսկաստան, կը միանան այնտեղ հաւաքված հակասահմանադրական ոյժերի հետ և դրսից կը սպառնան երկրի խաղաղութեանը, իսկ ներսից էլ նրանց գործակիցները, բարեկամները հարայ-հրոց են բարձրացնում, թէ վալին անկարող է, նա այս երկիրը քանդում, ամայացնում է, երկրի բնակիչներին նա փախցնում է, այս է անում, այն է անում։

Ահա գաղտնիքը գործված սպանութիւնների, աւազակութիւնների և բոլոր անկարգութիւնների, որոնք լինում են, որպէսզի ապացուցեն, որ սահմանադրական կառավարութիւնը անզօր է երկրի բարեկարգութիւնը պահպանել, և, զօրացնելով միապետական մութ ոյժերը, հող պատրաստեն միապետութեան և ռէակցիայի համար։ Գարնանը սպասվում են շատ ու շատ փոթորիկներ։

Մորակ

ԹԻՒՐՔԱՀԱՅ ՊԱՏՈՒԻՐԱԿՆԵՐԸ ՕՍՄ. ՆՈՐԸՆՏԻՐ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՄՕՏ

Խառն ժողովի յունվար 2-ին նիստին որոշման համաձայն պատ. փոխանորդ տ. Ղևոնդ Ծ. վրդ., վարչութեան ատենապետ Մանուկ Ազարեան, Արամ Հալաճեան և գործակատար Գամէր Շիրինեան էֆ.-ները յունվար 3-ին ժամը 5-ին այցելեցին նորընտիր վարչապետ Հակկը փաշայի, Պանկալթիի իր ապարանքին մէջ։ Վարչապետը սիրալիր ընդունելութիւն մը ըրաւ հայ պատգամաւորներուն, որոնք առաջնորդուեցան դահլիճը։

Ազարեան էֆ., խօսք առնելով, շնորհաւորեց նորընտիր վարչապետին պաշտօնը և ականակուռ Մէջիտիյէ պատուանշան ստանալը և յոյս յայտնեց, որ հայ ազգին պատկանող կարգ մը առկախ խնդիրներ ն. վսեմութեան շնորհիւ փութով պիտի լուծուին։

Հակկը փաշա շնորհակալութիւն յայտնելով հետևեալ խօսքերը ըսաւ. «Առկախ խնդիրներէն ամենէն կարևորը ս. պատրիարք հօր հրաժարականի խնդիրն է։ Երբ պաշտօնիս գլուխը անցայ, ամենէն առաջ այդ խնդրոյն փութով լուծում մը տալու համար եղելութեանց և հրաժարականի պարագաներուն մասին տեղեկութիւններ ուզեցի։ Այդ տեղեկութիւնները ստանալով, եզրակացուցի, թէ անոր բողոքին մէջ արդար չէզ մը կայ, և պէտքը զգացի պատրիարքը ամեն խնդիրներու մէջ գոհացնել»։

Ազարեան էֆ.—Պիտի խնդրէինք ձեր վսեմութենէն, որպէս զի այդ խնդրոյն լուծումը քիչ մը փութացուէր։

Հակկը փաշա պատասխանեց, թէ կրնան անհոգ ըլլալ, որովհետև իր առաջին գործը պիտի ըլլայ այդ խնդիրը լուծել։

Խօսակցութիւնը դարձաւ Ադանայի վրայ։ Ազարեան էֆ. դէպքը և տեղւոյն մէջ տիրող թշուառութիւնը նկարագրեց և ըսաւ, թէ այդ ջարդը հայութեան վրայ շատ ազդած է, և անոր սիրտը դիւրաւ չպիտի կրնայ առնուիլ։

Հակկը փաշա.—Ադանայի ջարդը սոսկալի բան էր։ Արդարև մոլեռանդութեան երեսէն տեղի ունեցած այդ աղէտը ոչ թէ միմիայն հայութեան, այլև ամբողջ օսմանցիներուն կուշտին տրուած դանակի հարուած մըն է։ Վստահ կրնաք ըլլալ որ այլևս ջարդեր չպիտի պատահին, որովհետև այդ տեսակ չարաշուք աղէտներու կրկնութիւնը երկրին քայքայման պատճառ պիտի ըլլայ։

Յետոյ փոխանորդ հայր սուրբը Մուշէն եկած հեռագիրը ներկայացուց վարչապետին։ Այդ հեռագիրին մէջ ըսուած էր, թէ Տալուորիկի մէջ անօթութենէ երեք հայեր մեռած են։

Վարչապետը կարդալով պատասխանեց. «Արդէն հայ ազգին ընդհանուր վիճակին մասին տեղեկութիւններ պիտի պահանջեմ այս երեկոյ տեղի ունենալիք մինիստրական խորհուրդին մէջ և պիտի աշխատիմ Թիւրքիոյ զարգացած և հայրենասէր մէկ ազգը գոհացնելու»։

Կէս ժամուան սիրալիր տեսակցութենէ մը վերջ պատգամաւորութիւնը մեկնեցաւ պատերազմական պաշտօնատունը՝ այցելելու համար նորընտիր պատերազմական մինիստր Մահմուդ Շէվքէթ փաշայի։ Նորին վսեմութիւնը մեծ պատուով ընդունեց պատգամաւորութիւնը ըսելով. «Հրամեցէք, հրամեցէք։ Հայերը իմ ամենասիրելի բարեկամներս են և ես ալ անոնց անկեղծ բարեկամը»։ Ազարեան էֆ. շնորհակալութիւն յայտնեց և շնորհաւորեց Շէվքէթ փաշայի մինիստրութեան պաշտօնը։ Խօսակցութիւնը դարձաւ ն. վսեմութեան կեանքին վրայ, որ մանրամասնաբար պատմեց իր երիտասարդութիւնը, և խօսքը վերջացնելով ըսաւ. «Ամեն անգամ որ իմ իրաւասութեանս սահմանին պատկանող խնդիր մը լուծել հարկ ըլլայ, դիմեցէք, և կը վստահեցնեմ ձեզի, որ անոր լուծումը պիտի կատարուի անմիջապէս»։

Պատուիրակութիւնը շնորհակալութիւն յայտնելով մեկնեցաւ Բ. Դուռ և հոն այցելեց ներքին գործոց մինիստր Թալէաթ-բէյը իր պաշտօնին մէջ վերահաստատուելուն համար։ Խօսակցութեան առանցքը շարունակ պատրիարքին հրաժարման խնդիրն էր։ Թալէաթ-բէյ ըսաւ, թէ իրենց ամենամեծ փափաքն է Դուրեան սրբազանը աթոռին վրայ տեսնել, գոհացուած տալ անոր պահանջներուն։ Նորին վսեմութիւնը պատրիարք հօր հրաժարականին լուծման յապաղման մասին ինչ-ինչ տեղեկութիւններ տուաւ և ըսաւ, թէ դահլիճին փոփոխութիւնը ամենէն աւելի երկարեց այս խնդիրը և անոր փութով լուծման համար ի սրտէ իր աշխատելն ալ խոստացաւ։

Ազարեան էֆ. ըսաւ, թէ ազգը այս տօնական օրերուն կուզէ իր պատրիարքը տեսնել։

Թալէաթ-բէյ կրկին հաւաստիքներ ըրաւ և ըսաւ. «Դուրեան սրբազան երբ իր աթոռը վերադառնայ, ամեն ուրախ իրեն այցելելու փափաք պիտի ունենամ, որովհետև զինքը շատ սիրած ենք։ Իր հրաժարականը փոխանակ զինքը մենէ հեռացնելու՝ աւելի առինքնող եղաւ»։

Պատուիրակները ոտք ելած ըլլալով ն. վսեմութիւնը փոխանորդ հօր ձեռքը բռնելով ըսաւ. «Պիտի խնդրեմ ձեր սրբազնութենէն՝ որպէսզի ժողովուրդին զգացնել չտաք ս. պատրիարքին բացակայութիւնը. թող խոհեմաբար շարժին, թելադրութիւններու չանսան. մխիթարեցէք և խրախուսեցէք զանոնք և ըրէք ձեր ձեռքէն եկածը»։

Փոխանորդ հայրը խոստացաւ այս մասին ամեն միջոցներ ձեռք առնել, և պատուիրակները շնորհակալութիւն յայտնելով մեկնեցան դէպի դատական պաշտօնատուն, բայց, դատական մինիստրին բացակայութեան պատճառով, պատուիրակները այցաքարտնին թողուցին ու մեկնեցան Կադըգիւղ, ս. պատրիարք հօր, և, շնորհաւորելով Նոր-Տարին, մինիստրներուն տուած տեղեկութիւնները և խոստումները հաղորդեցին ն. սրբազնութեան։ («Ժամանակ»)

ԿՈՏՈՐԱԾԸ ԲՈՒԽԱՐԱՅՈՒՄ

Հեռագիրներից արդէն գիտէք յունվարի 9-ի սարսափելի կոտորածի մասին Հին-Բուխարայում։ Հաշվում են բազմաթիւ սպանվածներ և վիրաւորներ։ Կոտորածը, մի քանիսների ասելով, ծագեց կրօնական տարաձայնութիւնների հողի վրայ բուխարացիների և պարսիկների միջև։ Սակայն աւելի հաւանական է մի այլ վերսիան։

Բուխարայի էմիրի տեղակալը Հին-Բուխարայում՝ այսպէս անուանված «կուշ-բէգին»՝ ազգով պարսիկ է։ Սարթերը վիրաւորված են համարում իրանց, որ այդպիսի մի մեծ պաշտօն տրվել է պարսկի և այդ պատճառով թշնամաբար էին տրամադրված դէպի նրան։ Կատաղեցնում էր սարթերին կուշ-բէգիի կողմնապահութիւնը դէպի պարսիկները, մանաւանդ կրօնական ծէսերի հողի վրայ։ Եւ ահա, առիթից օգուտ քաղելով, սարթերը վճռեցին յունվարի 9 ին, «շախսէյ-վախսէյի» օրը, աչկարա իրանց դժգոհութիւնը յայտնել կուշ-բէգիի դէմ, պահանջելով նրա պաշտօնանկութիւնը։ Այդ նպատակով ահագին ամբոխը, բաղկացած գլխաւորապէս պատանի ուսանողներից, շրջապատեց պալատը։ Կուշ-բէգին հրամայեց կրակել էմիրի զօրքերին։ Գրգռված ամբոխը աւելի ևս կատաղեց և սպանեց մի քանի զինւորների էմիրի զօրքերից։ Ամբոխի մէջ մեծ մասը վիրաւորված էին ոտից, ծնկից ներքև, որովհետև զօրքերը կրակում էին ներքև։

Միևնոյն ժամանակ ականատեսները, որպէս պատմում են, բողոք ներկայացրին այստեղ եկող եւրոպացիների դէմ, նոյնպէս գանգատվեցին, որ հրէաները գօտի տեղ չուան չեն կապում իրանց մէջքերին։

Երբ ամբոխը շարժվեց և սկսեց գնալ փողոցով, ժողովրդական գլխաւոր դատաւոր Ղազի-Հալէպը դուրս եկաւ ժողովրդի առաջ և արտասուքները աչքերում յանուն Ալլահի խնդրում էր դադարեցնել արիւնահեղ կոտորածը։ Սակայն ամբոխը նրան չէր լսում և շարունակում էր առաջ ընթանալ, ոչնչացնելով ամեն ինչ, որ պատկանում էր պարսիկներին։

Պարսիկներից շատերը ազատվեցին Նոր-Բուխարա փախչելով, ուր նրանց սպասում էր պաշտպանութիւն ռուս իշխանութիւնների կողմից։ Իսկ Հին-Բուխարայում մնացողները դեռ ևս վստահ չեն իրանց կեանքի համար։ («Б. В.»)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄՏՔԵՐ ԵՒ ՓԱՍՏԵՐ

Մարդկութիւնը կառավարող օրէնքների մէջ բարոյականը առաջնակարգ տեղ է բռնում։

Տարբեր և բազմազան են բարոյական օրէնքները և հասկացողութիւնները տարբեր ժամանակներում, միջավայրերում և պայմաններում զանազան ազգերի և ժողովուրդների մէջ։ Բայց ամեն մի պատմական դարաշրջան, ամեն մի միջավայր ունեցել է և ունի իր սեփական բարոյական օրէնքները, որոնցով ղեկավարվելը պարտադիր է հասարակութեան համար։

Կան, ի հարկէ, մշտական, յաւիտենական բարոյական օրէնքներ, որոնք ընդհանուր են գոնէ քաղաքակրթված և կուլտուրական ժողովուրդների համար և որոնց ոտնահարումը անթոյլատրելի է։ Բայց դրանից մարդկային գործունէութեան ամեն մի առանձին ճիւղ ունի իր բարոյականը, և երբ մենք ասում ենք՝ սեռական բարոյականութիւն, առևտրական բարոյականութիւն, գիտենք ինչ է նշանակում այդ։

Կայ արդեօք և քաղաքական բարոյականութիւն. պէտք է արդեօք, որ քաղաքական կուսակցութիւններն ու խմբաւորումներն ևս ունենան բարոյական—ահա մի հարց, որ տալիս է Կ. Պոլսի «Հայրենիքը»։

Այս հարցը ծագել է այն հանգամանքից, որ հայ քաղաքական կամ յեղափոխական կուսակցութիւնները, կարծէք, քաղաքական բարոյականը չեն ընդունում, և այն, ինչ որ մենք սովորաբար անբարոյականութիւն ենք համարում, կուսակցութիւնները տակտիկա են անուանում։ Օրինակ, շիտակ և ազնիւ անհատի համար անբարոյականութիւն է դաւաճանել իր համոզմունքներին, ուղղութիւնը և ծրագիրը փոխել. արմատական, առաջադէմ, ազատամիտ անհատի համար անբարոյականութիւն է դաշնակցել խաւարամիտ, կղերական, ռէակցիօների հետ. աշխատաւոր, բանւորական դասի շահեր պաշտպանողի համար անբարոյականութիւն է ծունկ ծռել կապիտալիստի առաջ և այլն, և այլն։ Սակայն իրականութեան մէջ մենք տեսնում ենք, որ յեղափոխական կուսակցութիւնները («Հայրենիքը» գլխաւորապէս ծանրանում է Դաշնակցութեան վրա) այլ ուղղութեան են հետևում։ Նրանք չեն քաշվում և խաւարամիտ, ռէակցիօների, կղերականի հետ դաշնակցել. նրանք չեն քաշվում ընկած տեղը կապիտալիստին ծունկ ծռել, նրանք չեն քաշվում, օրինակ, ազգի ընդհանուր սուգի ժամանակ, գնալ սուլթանի պալատը, կոչունքի, համերաշխութիւն կնքել իթթիհադականների հետ ճիշդ այն րօպէին, երբ ամբողջ ազգի կողմից բողոքներ էին բարձրանում իթթիհադեան կառավարութեան թուլութեանը դէմ։ Նրանք չեն քաշվում յաճախ նոյն իսկ իրանց երէկվայ գրածի հակառակը գրել։ Եւ այս ամենը նրանք համարում են ոչ թէ անբարոյականութիւն, այլ տակտիկա։

Ահա մի հարց, որ, արդարև, արժանի է խորին ուշադրութեան։

Մեզ՝ հասարակ մահկանացուներիս համար խնդիրը սակայն շատ պարզ է։ Այն, ինչ որ յեղափոխական կուսակցութիւնը տակտիկա է համարում, մենք անպայման անբարոյականութիւն ենք համարում։ Դժբաղդաբար, այդ տակտիկայով վարակված են և մեր ինտելիգենտներից շատերը, որոնք համակերպվելու իրանց ուղղութիւնը արդարացնում են այդ տակտիկայով։

Մենք յայտնում և պահանջում ենք, որ ինչպէս ամեն մի անհատ, նոյնպէս և ամեն մի քաղաքական կամ յեղափոխական կուսակցութեան համար պէտք է գոյութիւն ունենայ և բարոյականը։ Արդարացնել անբարոյականութիւնը տակտիկայով յատուկ է եղել միշտ եզուիտներին և անբարոյականներին։

Շահբեար

ՄԵՐ ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ ԱՌԻԹՈՎ

Գ.*)

Հայրապետական նոր կարգադրութեամբ՝ մեր աշխարհաբար լեզուի գործածութեան համար բացվում է մի նոր աշխարհ։ Այս աշխարհին առաւել քան թէ անհրաժեշտ է, որ իր գործ դրած լեզուն անպատճառ ունենայ որոշ, պարզ ու կորուկ, դիւանական ու դիւանագիտական նրբութիւններ ու գալարումներ յայտնելու յատկութիւններ և միանման ուղղագրութիւն։

Եթէ թողնենք, որ գործնական կեանքն ինքը տայ, ինքը մշակի այդ լեզուն, կարծեմ, շատ երկար կը քաշի այդ։

Ուրեմն աղաղակող կարիք է զգացվում մեր աշխարհաբարի օր առաջ մշակութեան ու կարգաւորութեան և ուղղագրութեան համար խիստ կարևոր և շուտափոյթ միջոցներ ձեռք առնելը։

Մեր նոր լեզուի մշակութեան խնդիրն առիթ ունենալով, կուզէի մի առաջարկութիւն անել, որ մեր արդեան պայմաններում մեր ներկայի և ապագայի համար, իմ կարծիքով, ունի կենսական առաջնակարգ նշանակութիւն։

Պատմական պայմանները, որոնց մէջ դրված է ապրելու մեր ազգային կեանքը թէ այստեղ, թէ Թիւրքիայում և թէ Պարսկաստանում, շատ մեծ փոփոխութեան է ենթարկվել։ Բռնի ոյժը, վարչական բիրտ բռնակալութիւնն արդէն որոշ չափով տեղի են տուել սահմանադրական սկզբունքներին, և, գնալով, այս սկզբունքները պիտի ամրանան և ընդլայնվեն։ Այսուհետև ինչպէս անհատական, այնպէս և մանաւանդ մեր ազգի գիտակցութիւնը, զարգացումը և բարոյական առաքինութիւններն են որ կազմելու են իր իսկական ոյժը, զօրութիւնը։

Շատ գեղեցիկ են Ալֆրեդ Ֆուլիէի խօսքերը իր նոր գրքի մէջ. «Միայն նիւթական շահերը չեն կարող մարդկանց այնչափ միաւորել, որ նրանց սրտերը միանման զարկեն։ Ուրիշ աւելի բարձր գաղափարներ կարող են խթան ծառայել մարդկութեան բարոյական առաջադիմութեան համար»։

Արդ, վերջին դարը փորձերից դաս առած՝ գանք միացած ոյժերով բռնենք այն ուղիղ ճանապարհը, որ տանում է մեզ ազգովին գիտապէս և բարոյապէս բարձրանալու և զօրանալու նպատակին «մէկս՝ ամենքի, ամենքս՝ մէկի համար» նշանաբանով։

«Ցեղերի և ազգերի ընդհանուր մրցումների մէջ ամեն բան հաշվի է առնվում—այս թւում և գիտութիւնների զարգացումը, որը, կազմելով ազգերի մշտական պարծանքը, նպաստում է ազգային ինքնաճանաչութեան զարգանալուն և ապահովում է հարևանների կողմից յարգանք և ակնածելի վերաբերմունք շատ աւելի, քան թէ ամեն կարգի ֆիզիքական ոյժերը»—գրում է Բէխտերեվ «Սլաւոնների գիտական մերձեցման մասին» յօդուածում («Запр. Жизни» № 5)։

Ժամանակ է, որ մեր ոյժերը կենտրոնացնենք մեր ազգային ինքնաճանաչութիւնը զարգացնելու՝ գիտութիւնները մեր մէջ տարածելով, մեր գիտական ու բարոյական աշխարհները հարստացնելով ու մաքրագործելով։ Սրա համար անհրաժեշտ է մերձեցումն մեր միմեանցից բաժանված հատուածների մէջ. մերձեցումն նրանց մամուլի, լեզուի, բարեգործական ու կուլտուրական, մանկավարժական ու հնագիտական-պատմական այլ և այլ հաստատութիւնների ու միութիւնների, ընկերութիւնների ու խմբակցութիւնների միջև։

Ազգովին ապրելու համար անհրաժեշտ է մեր համայնական կեանքը մշակել, ջերմացնել ու ոռոգել ժամանակակից պահանջների ու մեր ազգային առանձնայատուկ հողի ու կլիմայի համապատասխան միջոցներով։ Իսկ այս պահանջներն ու միջոցները պէտք է ուսումնասիրվեն ու ցուցադրվեն մասնագէտների համագումարներով ու ժողովներով։

Ահա մի ընդհանուր լեզու, գործունէութեան մի ընդհանուր ծրագիր, ազգային կուլտուրական ձեռնարկութիւնների մէկը միւսին լրացնող ցանց և պաշտօնական ու ընկերական փոխադարձ յարաբերութիւնների կարգաւորութիւն մշակելու, կազմելու և հաստատելու համար արժէ որ մեր հնագէտ-պատմագէտները, մեր հմուտ լեզուաբանները, մեր փորձառու և համբաւաւոր մանկավարժները, մեր տնտեսագէտներն ու հաշւեգէտները, մեր իրաւաբաններն ու բժիշկները, մեր գիւղատնտեսներն ու քաղաքատնտեսները, մեր բանիբուն արհեստաւորներն ու առևտրականները, մեր դրամատէրերն ու վարչագէտները հաւաքուեն, խորհրդակցութիւններ ու գաղափարների փոխանակութիւններ ունենային և որոշ նախագծեր կազմէին։

Լեզուն, որ իր ընդարձակ հասկացողութեամբ կոչված է արտայայտիչը լինելու մեր կուլտուրական նոր կեանքի, կուզէի որ իր մշակութեան շուրջը հաւաքէր իր մասնագէտ հարազատներին, կուզէի որ իր կարգաւորվելու, իր մաքրվելու, իր զարգանալու անյետաձգելի աշխատութեան հետ անբաժանօրէն կապէր և իր հետ այնքան սերտ առնչութիւն ունեցող և կարգաւորութեան կարիք ունեցող մեր միւս խնդիրների լուծումը։

Մեր այժմեան արտաքին պայմանները տալիս են մեզ մեր խաղաղ գործունէութեան համար այնքան դիւրութիւններ, որ կարելի է առանց աղմուկի և առանց աւելորդ երկիւղի ձեռք զարկել մեր նոր լեզուի մշակութեան հետ և մեր նոր կեանքի բարւոքման հիմնական նախագիծը կազմելու։

Մեր ոյժերը պէտք է որ մի ընդհանուր ծրագրի և մի ընդհանուր ղեկավարութեան տակ ներդաշնակօրէն մեր ազգային կեանքի նաւը դէպի նաւահանգիստը առաջնորդեն։

Մեր ազգային հատուածները պէտք է կոկված, յղկված մի ընդհանուր լեզուով իրար խօսեն, իրար գրեն, իրար կարդան, իրար յարեն և իրար համար ապրեն։

Ժամանակ է, որ մենք ևս ունենանք մեր ներքին ցաւերը դարմանելու, մեր կարիքները հոգալու, մեր ուղիները հարթելու, մեր խաւար կեանքը լուսաւորելու և մեզ իրար մօտեցնելու կենսական խնդիրները լուծելու և կարգի գնելու համագումարները։

Մեսրոպ ա.-ք. Մելեան

---

*) Տես «Մշակ» № 15 և 17.

ԹԻՖԼԻՍԻ ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Մսավաճառները և հացթուխները թոյլ են տալիս իրանց միսը և հացը վաճառել սահմանված սակագներից բարձր գներով, մինչդեռ գնողները, շատ քիչ բացառութեամբ, այդ մասին չեն յայտնում ոստիկանութեան պաշտօնեաներին, որի պատճառով իմ խնամքին յանձնված ոստիկանութեան պաշտօնեաների բոլոր ջանքերը՝ աւել առնվող գների առաջն առնելու համար՝ ապարդիւն են անցնում բոլորովին։

Այդ չարիքը արմատախիլ անելու նպատակով ազգաբնակութիւնը ամեն մի դէպքում, երբ մսավաճառները կամ հացթուխները աւելի փող են պահանջում, անպատճառ պէտք է տեղեկացնէ ոստիկանական պաշտօնեաներին՝ արձանագրութիւններ կազմելու և մեղաւորներին պատասխանատուութեան ենթարկելու համար։

Թիֆլիսի ոստիկանապետի պաշտօնակատար՝ Գնդապետ Զասիպկին

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Գիւնէյ-Ճարտար գիւղ (Շուշու գ.), 18 յունվ.

Վարանդայի ամենամեծ գիւղը մեր գիւղն է, որ բաղկացած է մօտ 500 տնից. գիւղն ունի խաղողի ընդարձակ այգիներ ու թթենիներ, ինչպէս և բերրի վարելահող։

Ժողովուրդը ապրում է նահապետական կենցաղով և այդ պատճառով տառապում է աղքատութեան մէջ, որովհետև «պաթով» վարած հողից ստացվում է այնքան ցորեն, որ հազիւ է բաւականութիւն տալիս գիւղին, իսկ այգիներից գոյացած գինին ու օղին գիւղացիները չեն արդիւնաբերում, այլ զբաղված են արբեցողութեամբ։

Չը կայ մեզանում հեղինակաւոր մի անձ, որ հասարակութեանը հասկացնի, թէ չէ կարելի այս կործանաբեր ճանապարհը շարունակել։ Մանուկ սերունդը ձեռքից գնում է, իսկ արբեցող ծնողները ուսման մասին չեն մտածում։

Գիւղումս գոյութիւն ունի միդասեան երկսեռ ծխ. դպրոց ներսիսեանաւարտ երիտասարդ ուսուցչով։ 500 տնից բաղկացած գիւղը տալիս է միայն 50 աշակերտ…

Ուսուցիչն անել կացութեան մէջ, հոգաբարձութիւնը՝ կազմված անպատրաստ մարդկանցից, որոնցից մէկը խնդիրներ է որ ուղարկում է կոնսիստորիա ու սինոդ՝ քահանայ ձեռնադրվելու համար։ Բայց պէտք է ասած, որ նա բացի գինուց ու օղուց և հարևան գիւղերում քէլեխ ուտելուց՝ ոչինչ չը գիտէ, և, քահանայ դառնալու դէպքում, տգէտ հոգևորականների թիւը մէկով ևս կաւելացնէ։

Մեր գիւղն ունի երեք քահանայ, մէկը միւսից տգէտ. նրանցից միայն մէկը թեմականաւարտ է, բայց սա էլ իր գիտցածը ի չարն է գործ դնում, որովհետև զրկվել է ամսական 50 կ.-ով աշակերտ սովորեցնելուց, և ամենևին դպրոցի գործերում չէ խառնվում։ Մեր օտարաբնակ հայրենակիցների վրա բարոյական պարտք է ծանրանում հետաքրքրվելու իրանց հայրենի գիւղով և նրա մանուկ սերնդի կրթութեան գործով։

Նիկողայոս Յարութիւնեան

ՂԶԼԱՐԻ ՓՈԽԱՆՈՐԴՈՒԹԻՒՆԸ

Վերջերս Արմաւիրում հրատարակվող «Отголоскъ Кавказа» օրաթերթի մէջ կարդացի, որ սինոդը որոշել է Ղզլարի հոգ. կառավարութիւնը Վլադիկավկազ փոխադրել։

Թէ ինչ մտքով է Ղզլարի հոգ. կառավարութիւնը Վլադիկավկազ փոխադրվում, մեզ անհասկանալի է։ Վլադիկավկազը, բացի այն որ շատ հեռու է գտնվում Աստրախանից (թեմ. քաղաք), այլ և՝ կենտրոն չէ կազմում Աստրախանի թեմի շատ քաղաքների։ Շատ լաւ կը լինի, եթէ Վլադիկավկազը Թիֆլիսի թեմին կցվի, որովհետև նա անհամեմատ աւելի մօտ է Թիֆլիսին, քան Աստրախանին։

Մեր կարծիքով Ղզլարի հոգ. կառավարութիւնը հէնց Ղզլարումն էլ պէտք է մնայ, իսկ եթէ անհրաժեշտ կարիք կայ փոխադրելու, դրա համար պէտք է ընտրվի ամենակենտրոն և ամենակարևոր տեղը։ Ըստ իս, այդպիսի մի կենտրոն տեղ ներկայացնում է Արմաւիրը, ուր թէ բաւականաչափ հայ կայ և թէ կենտրոնն է կազմում Հիւսիսային Կովկասում եղած Աստրախանի թեմի բոլոր քաղաքների։

Արմաւիր պէտք է փոխադրել նաև Աստրախանի թեմ. դպրանոցը, ուր, լուրերին նայելով, հազիւ 20 աշակերտ կայ։ Արմաւիրը բացի այն, որ կարող է թեմ. դպրանոցի շէնքը շինել, այլ և կարող է տալ առնուազն 200 աշակերտ, որը մի պատկառելի թիւ է։ Այստեղ պէտք է ի նկատի ունենալ այն, որ արմաւիրցոց մեծամասնութիւնը ռուսախօս և չերքէզախօս է և, բանալով այստեղ թեմ. դպրոց, հայութեան այս խոշոր և կարևոր հատուածը կարող ենք կորստից ազատել։

Թուցէ առարկողներ լինեն, թէ թեմ. դպրանոցը անպայման պէտք է առաջնորդանիստ քաղաքում լինի. դրան օրինակ կը բերենք Նոր-Նախիջևանի թեմ. դպրոցը, որի առաջնորդանիստ քաղաքն է Քիշինևը։

Որ արմաւիրցիք սիրով կը պահեն թեմ. դպրոց, իբրև ապացոյց կարող եմ ասել այն, որ այսօր պահում են մի քանի դպրոցներ և նոյնիսկ պետ. գիմնազիաներ իրանց հաշւով։

Տեղիս հոգաբարձական մարմինը, թարգման հանդիսանալով տեղիս ժողովրդի ցանկութեան, մտադիր է դիմել Աստրախանի թեմ. ժամ. կառավարիչ Մխիթար եպիսկոպոսին, խնդրելով միջնորդել սինոդի առաջ յիշեալ որոշումը փոխելու, այն է՝ Ղզլարի հոգ. կառավարութիւնը փոխանակ Վլադիկավկազի՝ փոխադրել Արմաւիր։

Թէ թեմի միւս քաղաքները ինչ կարծիքի են, չը գիտենք. ցանկալի է այդ առիթով օր առաջ լսել կարծիքներ։

Սահակ ք. Տէր-Յովհաննիսեանց

Ստաւրոպօլ

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

(Հեռագրով)

Պետերբուրգ, 25 յունվարի

Իշխ. Վօլկօնսկիի նախագահութեամբ շարունակվում է տեղական դատարանի նախագծի 19-րդ յօդուածի քննութիւնը։

Չերնօսվիտօվը և Շչեպկինը պաշտպանում են սահմ.-ռամկավարների առաջարկութիւնը այն մասին, որ անհրաժեշտաբար դատաւորները լինեն բարձրագոյն իրաւագիտական կրթութեան տէր անձեր և որ պէտք է դուրս հանել ստացուածքային ցենզը. Շչեպկինը ընդգծում է այն հանգամանքը, որ հոկտեմբերեանները յետ են վերցնում իրանց ուղղումները։

Մեակին մատնանշում է, որ նախագծով գիւղացիները անմասնակից են մնում դատաւորների ընտրութիւններին։ Վերջում հռետորը պաշտպանում է կրթական ցենզը։

Բարօն Չերկասօվը պաշտպանում է իր առաջարկութիւնը, թէ անհրաժեշտ է դատաւորների համար որոշել բարձրագոյն իրաւաբանական ցենզ։

Բանաձևելով խօսակցութիւնները, զեկուցանող Շուբինսկին ասում է, որ նրա կարծիքով ընդունելի են Օպօչինինի ուղղումը համառուսական ցենզ սահմանելու մասին և հոկտեմբերեանների ուղղումը, որ դատաւորները լինեն բարձր կրթութեան տէր մարդիկ։

Քուէարկութեամբ ընդունվում է 19-րդ յօդուածը, բացի այն կէտից, որ նախատեսում է պարտաւորապէս ստացուածքային ցենզ. միւս բոլոր ուղղումները մերժվում են։

21-րդ յօդուածի առիթով, որով յիշատակվում են այն անձինք, որոնք չեն կարող դատաւորներ ընտրվել քննութեան տակ կամ պատիժ կրած լինելու պատճառով, Կօվալենկօ I-ինը առաջարկում է յօդուածը լրացնել մի ծանօթութեամբ, որ հաշտարար դատաւորներ չեն կարող ընտրվել նմանապէս հրէադաւանութեանը պատկանող անձինք։ Այս ուղղման նկատմամբ Դումայի 30 անդամներ յայտնել են նախնական հարց համաձայն նակազի 121-րդ յօդուածի։

Մարկօվ II-րդը, միանալով Կօվալենկօ I-ինի ասածներին, ասում է. «Ի զուր էք դուք, պարոններ, կամենում հրաժարվել հրէական հարցից. դա անպատուաբեր է Դումային։ Այդ հարցը իր բովանդակ մեծութեամբ վաղ թէ ուշ բարձրանալու է Դումայում։ Այդ ուղղումը արտայայտում է լոկ ռուս ժողովրդի վերաբերմունքը դէպի հրէաները. սակայն դուք վախենում էք այդ հարցից, որովհետև կախումն ունէք այդ պարազիտ ցեղից»։

Նախագահը կանգնեցնում է Մարկօվին։

Մարկօվը, պատասխանելով նախագահին, ասում է, որ նա դիմում է ոչ ամբողջ Դումային, այլ նրա առանձին անդամներին։

Նախագահը, յիշեցնելով Մարկօվին նակազի մասին, որ թոյլ չէ տալիս հռետորին դիմել Դումայի առանձին անդամներին, հրաւիրում է նրան ծանօթանալ նակազի հետ։

Մարկօվ.—Ես չեմ էլ կարդայ նակազը. նա ապօրինի է (բուռն ծափ. աջից)։

Նախագահը.—Դումայի անդամ Մարկօվ, գտնելով ձեր դարձուածքները անտեղի, նակազով ինձ տրված իրաւունքի ոյժով զրկում եմ ձեզ խօսքից (Դուման բուռն կերպով ծափահարում է)։

Մարկօվ, իջնելով ամբիօնից.—Շնորհակալ եմ ձեզ, պարոններ, որ ջհուդութիւն անող նախագահ ունէք...։

Նախագահը առաջարկում է Մարկօվին արձակել 15 նիստերից։

Մարկօվը, դիմելով Դումայի անդամներին, անուանում է նրանց պնակալէզ ջհուդներ...

Ընդհանուր աղմուկ, բացագանչութիւններ՝ «դուրս կորիր»։

Դումայի որոշմամբ Մարկօվ II-րդը արձակվում է 15 նիստերից։

Հեռանալով Մարկօվը ձայնում է. «Ուրախ եմ, որ ես բաժանվում եմ ձեզանից 15 նիստերից, ջհուդ պորտաբոյծներ...» (աղմուկ ձախից)։

Քուէարկութեամբ Դումայի 30 անդամների յայտարարութիւնը՝ Կօվալենկօ 1-ինի ուղղման քննութիւնը յետաձգելու մասին ընդունվում է։

Նախագահական բազկաթոռը գրաւում է Խօմեակօվը։

Մի քանի ուղղումներ մերժելուց յետոյ, Դուման ընդունում է 21-րդ յօդուածը մասնաժողովի խմբագրութեամբ։

Այնուհետև ընդունվում են նոյնպէս մասնաժողովի խմբագրութեամբ 22-դ, 23-դ և 24-դ յօդուածները։ (Հ. Գ.)

ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ԳՐՔԵՐ

Ստացանք հետևեալ նոր հրատարակութիւնները. 1) Ամենուն Օրացոյցը, Թէոդիկի, 1910 թ., Դ. տարի, Կ. Պօլիս։ Այս օրացոյցը պարունակում է 200 պատկեր և բաղկացած է 400 էջերից. կազմված է բաւական ճոխ և գեղեցիկ։ Ցանկալի էր, որ յաջորդ տարիները գրական բաժինը աւելի բազմակողմանի լինէր։ 2) Ճաշակ արդի հայ մատենագրութեան։ Ծաղկաքաղ աշխարհաբար լեզուէ, բազմաթիւ գրական կենսագրութիւններով և ծանօթութիւններով, չորրորդ տպագրութիւն, աշխատասիրութեամբ Ա. Պիպէռճեանի. առաջին հատոր, Կ. Պօլիս, 1910 թ.։ Ռուսահայ գրողներից զետեղված են միայն Ա. Ահարոնեանի, Ղ. Աղայեանի, Այվազօվսկի Գաբրիէլ եպիսկոպոսի, Յ. Թումանեանի, Աւ. Իսահակեանի, Ալ. Ծատուրեանի, տ. Շ. Կուրղինեանի, Լ. Մանուէլեանի, Յ. Յակոբեանի, Յ. Յովհաննիսեանի, Միք. Նալբանդեանի, Ս. Շահազիզի և Վ. Փափազեանի գրուածքներից հատուածներ։ Գինն է 10 ղրուշ։ 3) Գրիգոր Մագիստրոսի թղթերը, բնագիրն առաջաբանով և ծանօթութիւններով, առաջին անգամ ի լոյս ընծայեց Կ. Կոստանեանց, Ալեքսանդրօպօլ, 1910 թ., գինն է 2 ր.։ Բանասիրութեան և գրականութեան պատմութեան տեսակէտից կարևոր աշխատութիւն է։ 4) Մամիկոնեան Ռուբէն, Պետրոս Մոճոռեանցի, պօէմա, Ալէքսանդրօպօլ, 1909 թ., գինն է 30 կ.։ 5) L'Artiste, թարգմանութիւն Շիրվանզադէի վէպի. թարգմանիչն է Սերժ Պերմէնի, որ առաջաբանի մէջ յայտնում է, թէ Շիրվանզադէն Հայաստանի ժամանակակից ամենաականաւոր գրողն է և նոյնիսկ առաջին կարգի գրող միջազգային տեսակէտից։ Որքան էլ չափազանցված է այս կարծիքը, բայց ուրախալի է, որ հայ գրողը գնահատվում է և եւրոպացիներից։ 6) «Տղամարդի սեռական կեանքը». մասն առաջին։ Կազմեց մէդիցինայի ֆէլդշէր-մասսաժիստ Յար. Եսայեան, գ. 30 կ., 92 էջ։

ՅՕԳՈՒՏ ԱԴԱՆԱՅԻՆԵՐԻ

«Մշակի» № 9-ում տպված համաձայն ունէինք 280 րուբլի 25 կոպէկ։ Այնուհետև ստացանք դարձեալ—1) Թիֆլիսում, Օ. Տէր-Ոսկանեանից, Յ. Խօջամիրեանի հրատ. «Վանգոյժ» գրքոյկի վաճառումից գոյացած՝ 3 ր., 2) Նոր-Բուխարայից, Շամիլ Աբրահամեանից, հանգանակված տեղական հայ գաղութի մէջ, «աւետիս» ման գալով՝ 24 ր. 60 կ., 3) Մոսկվայից, Արսէն սարկ. Սիմէօնեանից՝ 3 ր. 37 կ., 4) Սաբզվարից, տ. Թամար Յարութիւնեանից՝ 5 ր., 5) Շուշուց, աշակերտներ Արդաման Տէր-Աւետիքեանից և Աշոտ Ծգնաւորեանից, հանգանակված «աւետիս» ման գալով՝ 4 ր. 7 կ., 6) Վլադիկավկազից, Ա. Վ. Դէյկարխանեանի միջոցով մի տիկնոջից, անյայտ՝ 15 ր., 7) Աբաս-Թումանից, Խաչատուր Մինասեանից, հանգանակված Ծրագալոյցի երեկոյին, Կօլայի և Մարտինի խմբի ձեռքով, աջակցութեամբ Տիգրան Մէտէնճեանցի, 31 ր. 90 կ., որից 10 ր. 25 կ. ծախք և երկու կարօտեալ ընտանիքի նպաստ տրված լինելով, մնացեալն 21 ր. 65 կ., 8) Սօչիից, Աւետիս Յարութիւնեանից, հանգանակված Սարգիս Մինասեանի հարսանիքի ժամանակ՝ 55 ր. 75 կ. (տուել են. Սարգիս Մինասեան՝ 15 ր., Աւետիս Յարութիւնեան՝ 10 ր., ապա 18 հոգի՝ 1-ական րուբլի, և մնացածը 50 կ., 30 կ., 25 կ., 20 կ., 15 կ. և 10 կ.)։ Գումարը՝—132 ր. 44 կ., իսկ նախորդ 280 ր. 25 կ. գումարի հետ ընդամենը—412 ր. 69։ Այս գումարից դուրս գալով 15 ր., որ ստացված էր Թիֆլիսի երկաթուղու բանւորներից Գ. Զալխուշեանի հրատ. գրքի 3 օրինակի գին, բայց սխալմամբ տրված է Հանգանակիչ Մասնաժողովին, մնացորդ 397 ր. 69 կ. յանձնեցինք նոյն Մասնաժողովին։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Ինչպէս հաղորդեցինք, Վրաստանի էկզարխ Քարթալինայի և Կախէտիայի արքեպիսկոպոս Ինոկենտի արքեպիսկոպոսը յունվարի 25-ին, ցերեկվայ ժամը 2-ին, այցելեց Կովկասի Փոխարքայ կոմս Ի. Ի. Վօրոնցօվ-Դաշկօվին։ Փոխարքան, շրջապատված իր շքախմբով, հանդիպեց էկզարխին Պատկերազարդ դահլիճում և դիմեց նորին բարձր սրբազնութեանը հետևեալ խօսքերով.

«Ուրախութեամբ ողջունում եմ ձեզ, ձերդ բարձր սրբազնութիւն, մեր երկիրը ոտք դնելու առիթով, որին մենք վաղուց անհամբեր սպասում էինք»։

Ողջոյնից յետոյ, Փոխարքան նորին բարձր սրբազնութեանը ներկայացրեց իր շքախմբի անդամներին։ Էկզարխը, օրհնելով բոլորին, դիմեց Փոխարքային և, յանձնարարութեամբ Նորին Կայսերական Մեծութեան, հաղորդեց Թագաւոր Կայսրի հետևեալ խօսքերը.

«Յայտնեցէք կոմսին Իմ խորին ողջոյնը. ցանկանում եմ նրան առողջութիւն եւ աջողութիւն Կովկասը կառավարելու բոլոր գործերում»։

Դրանից յետոյ էկզարխը կոմսին և կոմսուհուն օրհնեց սուրբ խաչով։ Յետոյ Ինոկենտի արքեպիսկոպոսը Փոխարքայի և նրա շքախմբի անդամների ուղեկցութեամբ գնաց պալատական եկեղեցին, ուր ընդունվեց Վիաէլօվսկի աւ. քահանայից։ Փոխարքայի պահակախմբի կօզակ-երգեցիկ խումբը երգեց «իսպոլլատի դեսպոտա»-ն։ Եկեղեցում կատարվեց համառօտ մաղթանք, որից յետոյ նորին բարձր սրբազնութիւնը Փոխարքայի հետ մտաւ պալատի հիւրատունը, ուր պատրաստված էր թէյ։ Էկզարխը ժ. 2½-ին մեկնեց պալատից։

Շուտով Կովկասի Փոխարքայ կոմս Վօրոնցօվ-Դաշկօվը, իր շքախմբի մարդկանց ուղեկցութեամբ, այցելեց էկզարխին։ Նորին բարձր սրբազնութիւնը հանդիպեց Փոխարքային էկզարխութեան տան սանդուղի վերին մասում։

◆ Երէկ, ցերեկվայ ժամը 3-ին, Վրաստանի էկզարխը այցելեց Թիֆլիսի թեմի առաջնորդ Գարեգին արքեպ. Սաթունեանին։ Էկզարխը գոհունակութիւն յայտնեց սրբազանին պատգամաւորութիւն ուղարկելու համար իր գալստը Թիֆլիս շնորհաւորելու առիթով։ Նորին բարձր սրբազնութիւնը ցանկութիւն յայտնեց սիրով լինել և խաղաղութեամբ առաջնորդել ժողովուրդը։ Մօտ 15 րոպէ մնալով, էկզարխը գնաց առաջնորդարանից թողնելով շատ լաւ տպաւորութիւն։

◆ Մեզ հաղորդում են, որ Գիւղատնտեսական և Տնայնագործական Ընկերութեան վաղվայ ընդհանուր ժողովի նիստում կը կարդայ զեկուցում նաև Գ. Տէր-Գրիգորեան իր ինստրուկտորական փորձերի մասին Կարսի շրջանում։ Այդ նիստում ընկերութեան անդամներին և ներկայ եղողներին կը բաժանվի նախկին ընդհանուր ժողովի արձանագրութիւնը տպագրված։

◆ Յունվ. 25-ին, երեկոյեան, մեկնեց Թիֆլիսից Սուխումի վիճակը Կովկասի Փոխարքայի քաղաքացիական մասի օգնական սենատոր Վատացին ուղեկցութեամբ երկր. գլխ. կառ. կովկասեան լիազօր Արխիպօվի, կովկ. ճան. հաղ. կառավարիչ Հօֆմանի և շտաբս-կապիտան Նիկօլայեվի։ Սենատոր Վատացին այցելելու է մի քանի տեղեր ծանօթանալու համար տեղագրական տեսակէտից։

◆ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը յունվ. 25-ին պաշտօնական տեղեկութիւն ստացաւ բնագէտների և բժիշկների XII համագումարի բիւրօյից, որ 1911 թ. Թիֆլիսում տեղի կունենայ բնագէտների XIII համագումարը։ Այդ տեղեկութեան առիթով վաղը նշանակված է առաջին կազմակերպչական նիստը Թիֆլիսի մասնաւոր բարձր դասընթացքների և քաղաքային ինքնավարութեան ներկայացուցիչներից։

◆ Ժողովրդական-երաժշտական ընկերութիւնը սկսում է իր գործունէութիւնը և հաւանական է, որ նա ունենայ մեծ աջողութիւն։ Նրա նախագահ ընտրված է երաժշտագէտ Յ. Տէր-Դաւթեան, որը ոգևորված է նոր ընկերութեան նպատակների իրագործութեան գաղափարով։ Եթէ Թիֆլիսի երաժշտասէրները խմբվեն նոր ընկերութեան շուրջը և աշխատեն տարածել երաժշտութիւնը ժողովրդական մասսայի համար, նրանք մեծապէս կը նպաստեն զարգացնելու երաժշտական ճաշակ ժողովրդի մէջ և այդպիսով ուժեղացնելու մի կրթող և ազնւացնող գործօն կեանքի մէջ։

◆ «Зак.» թերթը ուշադրութիւն է հրաւիրում վրաց գրող տ. Ն. Օրբէլիանիի հիւանդ դրութեան և ծայրայեղ կարիքաւոր վիճակի վրա։ Տիկինը ուղղակի զուրկ է միջոցներից բժշկվելու համար։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Յունվարի 25-ին, ցեր. ժ. 2-ին, Իգնատի Իւխնօն, որ ապրում է Ֆէօդօսիևսկայա փող. № 22 տան մէջ և ծառայում է Բօզարջեանի ծխախոտի խանութում, յայտնեց ոստիկանութեան, որ նրա բացակայութեան ժամանակ անյայտ չարագործներ դուռը կոտրելով յափշտակել են բնակարանից 170 րուբլի փող և տնային զանազան իրեր 133 ր. 40 կ. գումարի։ Ոստիկանութեան պաշտօնեաների ձեռք առած միջոցների շնորհիւ ձերբակալված են կասկածով Եգոր Մելաձէն և Միխայիլ Տրուշենկօն։

◆ Ոստիկանութիւնը երկաթուղու կայարանի մօտ Անդրէյ Կօչլաձէի ճաշարանում երևան հանեց մի գաղտնի, իշխանութիւնից չը հաստատված, կազմակերպութիւն, որ «Վարեազ» բեռնակիր սայլապանների միութեան պատրուակով ժողովել էր մօտ 400 րուբլի։ Այս գործի առիթով ձերբակալված են չորս հոգի՝ Ասամբաձէ, Գօգնաձէ, Կօչլաձէ և Սեմեանինօվ։

◆ Յունվ. 25-ին ոստիկանութիւնը ձերբակալեց Օհանէս Մելիք-Բալուսեանին, որ վէճի ժամանակ դանակով վէց վէրք էր հասցրել Շաուշաշվիլի ազգանունով մի մարդու։

◆ Յունվարի 25-ին Թիֆլիսեցի Կօնստ. Բօղանկօյի բնակարանից (Սուրբ-Կարապետի վերևը տ. № 12) անյայտ մարդիկ գողացել են 80 րուբլանոց մի գորգ, 174 ր. 20 կոպէկի զանազան իրեր։ Ձերբակալված են Կարապետ և Արտաշէս Ամիրէջեանցը։

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

◆ Կ. Պօլսում վերջերս Աբէլեան-Արմէնեան թատերախմբի ձեռքով ներկայացվել են Շիրվանզադէի մի նոր պիէսը «Կործանվածը» վերնագրով և Գ. Սունդուկեանի «Քանդված օջախը» կօմեդիան։ Լրագիրների մէջ տպված քննադատութիւններից երևում է, որ «Կործանվածը» անաջող պիէս է, չունենալով «տիպարների հարազատութիւն, որոշ նպատակ և իրականութեան ցուցադրութիւն», ուստի և չէ արդարացրել ակնկալված յոյսերը, «մինչ «Քանդված օջախը» լիովին կը գոհացնէ զմեզ այդ մասին՝ տալով մեզի ճշգրիտ տիպարներ, ցուցադրելով մեր աչքէ ուսումնասիրուած իրականութիւն և ձգտելով որոշ ուղղութեան և նպատակի»—գրում է «Հայրենիք» թերթը։

◆ Վանից հաղորդում են «Կոչնակ» ամերիկահայ թերթին. «Վերջերս իմացանք, որ հակակրօնական պրօպագանդի շարժառիթով Կտուց անապատի եկեղեցւոյն գմբէթի խաչը վեր բերած և հոն գտնուած կաթողիկոսական մէկ մարմարեայ գեղակերտ խաչքարձանը ոտքի տակ փշուր-փշուր ըրած են»։

◆ Նիկօմիդիայի մէջ յունվարից սկսել է հրատարակվել հայերէն մի նոր տասնօրեայ թերթ «Բիւթանիա» անունով, իսկ Զմիւռնիայում «Փեթակ» անունով մի նոր զաւեշտաթերթ։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

◆ Գեներալ Կուրօպատկինը աւարտեց իր եռահատոր մի մեծ աշխատութիւնը «Ռուսաստանը ռուսների համար» վերնագրով։ Այդ աշխատութեան մէջ բացատրված է Ռուսաստանի սկզբնաւորութեան պատմութիւնը մինչև մեր օրերը հնագոյն աղբիւրների հիման վրա։ Ի միջի այլոց հեղինակը խօսում է զինուորական գործի ներկայ դրութեան մասին։ («Р. У.»)

◆ «Р. У.» լրագրին հաղորդում են, որ Պարիզում ստորագրութիւններ են հաւաքվում այն բողոքի տակ, որ ուզում են ներկայացնել դատարանի այն վճռի դէմ, որի հիման վրա պրօֆեսօր Մ. Կօվալեվսկին պէտք է բանտ նստի։ Բողոքի տակ արդէն կան Ֆրանսիայի աչքի ընկնող հասարակական գործիչների ստորագրութիւնները։

◆ Խաղաղութեան միջպարլամենտական խմբի նախագահ Եֆրէմօվ հաղորդեց լրագիրների թղթակիցներին մանրամասնութիւններ Պետերբուրգ եկող Ֆրանսիական հիւրերի մասին։ Պարիզից նրանք ճանապարհ են ընկնում փետր. 3-ին (ն. տ.) և 5-ին կը լինեն Պետերբուրգ։ Գալիս են 13 պատգամաւորներ և սենատորներ։ Գալստեան երկրորդ օրը, երեկոյեան, մտադրութիւն կայ տալ պարլամենտական բանկէտ 150 հոգու համար, որին ներկայ կը լինեն Պետական Դումայի և Պետական Խորհրդի անդամները, նոյնպէս և արտաքին գործերի մինիստրը, ֆրանսիական դեսպան Լիւի և ռուս ու արտասահմանեան մամուլի ներկայացուցիչները։ Երրորդ օրը կը լինի երկու բանկէտ՝ ֆրանսիական դեսպանատանը և խաղաղութեան նորերս հիմնված ընկերութեան մէջ։ Ֆրանսիական հիւրերը կայցելեն Պետական Դուման, Էրմիտաժը, թանգարանները և մայրաքաղաքի աչքի ընկնող տեղերը։ Երկու օրով նրանք կերթան Մոսկվա, ուր նրանց կուղեկցէ պատգամաւոր Եֆրէմօվ։ Ցարսկօէ Սելօյում պատգամաւորութեան ընդունելութեան մասին ներկայումս բանակցութիւններ է վարում ֆրանսիական դեսպանը։ Ֆրանսիացի հիւրերը ընդամենը 7 օր կը մնան Ռուսաստանում։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՕՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Ուխտվածներ

Ա. Ահարոնեանի «Ուխտվածներ» պիէսը այլաբանական մի երկասիրութիւն է, որը փորձում է լուսաբանել հայ ժողովրդի բաղդի և վշտի մի խոշոր գիծը։

Ահարոնեանը ներկայացնում է մեր առաջ մի շէն հայկական օջախ, մէկը բազմաթիւ իր նման օջախներից, որը պահպանվում է հալալ աշխատանքով և ընտանեկան համայնքի գործակցութեամբ։

Բայց այդ բարեկեց օջախի ետևէն աճում է արհաւիրքի սպառնալիքը, և ահա մի չար օր օջախը քանդված է և մարդիկ ենթարկված են այնպիսի հալածանքների, որ նրանք այլ ևս հնարաւոր չեն գտնում մնալ մայր երկրի վրա և պատրաստվում են գաղթել դէպի ուրիշ հօրիզոններ։

Եւ յուսահատ գաղթը կիրագործվէր, եթէ չը հնչէր զգաստացնող մի ձայն, թէ այդ փրկարար համարվող գաղթը տանում է դէպի անդունդ և ինքը սկիզբն է մի աւելի մեծ աղէտի. ձայնը յիշեցնում է՝ թէ երջանկութեան հիմքերը դարձեալ պէտք է հաստատվեն մայր հայրենիքի սահմաններում, նախկին օրրաններում։

Պիէսի մէջ դրամատիկական հանգոյցներ չը կան։ Դրաման ենթադրվում է իրերի դրութեան մէջ։ Դրաման աշխատաւոր ժողովրդի այն ճգնաժամի մէջն է, որ ոտի տակ է տալիս նրա հալալ աշխատանքը։

Իբրև կենցաղագրական հիւսուածք՝ նշանակութիւն ունի միայն առաջին գործողութիւնը։ Այնտեղ հանդէս է բերված գիւղացի Գրիգորի (Շախաթունի) ընտանիքը իր կենցաղի մի քանի տեսարաններով։ Այդ գործողութիւնը նպատակ ունի մարմնացնել խաղաղ աշխատանքով ապրող ժողովրդին իր առօրեայ հանգամանքներում։ Դա մի գեղեցիկ հետաքրքրական պատկեր կը լինէր, եթէ բնորոշ գծերը աւելի մօտ լինէին իրականութեան, եթէ խօսակցութեան լեզուն ազատ լինէր չափազանց բարձր ոճից և պայմանական դարձուածքներից։

Միւս արարուածները գործում են առանձին-առանձին ապաթէօզների տպաւորութիւն։

Ահա ձեր առաջ մի պատկեր, որ ներկայացնում է լուսեղէն փայլով շղարշված «վիշապ»։ Չորս կողմը աւերակներ, մարդկային ոսկորներ։ Դա ապաթէօզի նման մի պատկեր է, որի գործողները անշարժ չեն և արտասանում են մենախօսութիւններ։

Ահա մի ուրիշ ապաթէօզ—գաղթականները լեռների, քարանձաւների ձորերի մէջ։ Ահա ճգնաւորի մի խուց և ինքը մենակեացը միջնադարեան դէմքով ձեր առաջ։

Իբրև առանձին ապաթէօզներ, տեսարանները շոյում են հանդիսականների աչքերը։

Բայց բոլորը միասին իբրև մի պիէս չունի դրամատիկական բովանդակութիւն, ուստի և չէ պարունակում ոչ կրքերի հանդիպումներ, ոչ դիրքերի շփումներ, ոչ յարաբերութիւնների ընդհարումներ։

«Ուխտվածներ» պիէսը գործում է մի բանաստեղծական գրուածքի տպաւորութիւն, բաժանված չորս հագներգութեան։ Եւ դերակատարութիւնը ներկայանում էր իբրև դեկլամացիաների մի ժողովածու առանձին-առանձին անձերի յանձնված։

Հայ թատրօնի վարչութիւնը, ինչպէս երևում է, առանձին ջանք էր գործ դրել ներկայացման արտաքին մասերի վրա և յիրաւի սարքել էր տպաւորիչ տեսարաններ. բայց նա չէր կարողացել հարազատութեամբ դուրս բերել հայ գիւղը և հայ գիւղացուն։ Թէ զգեստի և թէ տնային պարագաների մէջ կային աչքի ընկող անպատեհութիւններ։

Հասարակութեան վրա շքեղ տեսարանները գործում էին տպաւորութիւն և նա ծափահարում էր դերասանական անսամբլին։

Թատրօնում կային բաւական թւով հանդիսականներ։ Թատրօնի մօտ երեք քառորդը լցված էր այցելուներով։

Թատրօնական վարչութիւնը մտադիր է կրկնել պիէսը։

Սիրող

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Орестъ Семинъ. «Основные вопросы мѣстнаго самоуправленія». Баку, 1910 г., ц. 50 коп.

Օրեստ Սեմինի ներկայ գրքոյկը վերաբերում է տեղական ինքնավարութեան կամ զեմստվային խնդրին Անդրկովկասում։

Հեղինակը տալիս է նախ ընդհանուր տեսութիւն տեղական ինքնավարութեան և ապա կենտրոնացնում է իր ուշադրութիւնը այն ծրագիրների վրա, որոնք մշակվել են Անդրկովկասի համար թէ 1905 թւի նախնական մտքի փոխանակութիւնների և թէ 1909 թւի նահանգական խորհրդակցութիւնների ժամանակ։ Մանաւանդ նա կանգ է առնում մանրամասնօրէն Բագուի խորհրդակցութեան վրայ։

Գրքոյկի մէջ կան հետաքրքրական վիճակագրական հաշիւներ, որոնք լոյս են սփռում այդ պայմանների վրա, որոնց շրջանում պէտք է իրագործվի անդրկովկասեան զեմստվօն։

Գրքոյկի մէջ զետեղված է նաև կովկասեան զեմստվօյին վերաբերեալ գրական երկասիրութիւնների ցուցակը։

Սեմէնի աշխատութիւնը ունի ժամանակակից հետաքրքրութիւն։ Նա բաղկացած է 107 մեծադիր երեսներից։

Հրատարակված է Բագւում։ Ա. Ք.

—

Պտղատու ծառերի թշնամիները և նրանց դէմ կռւելու միջոցները, Թիֆլիս, 1910, գինն է 35 կոպէկ։

Օգտաւէտ գրքոյկ է ներկայ հրատարակութիւնը։ Նա տալիս է մի շարք տեղեկութիւններ ծառերի հիւանդութիւնների մասին, որոնց պատճառով բոյսերը կորցնում են իրանց արդիւնաբերութիւնը կամ իրանք բոլորովին չորանում, փտում։

Հիւանդութիւնների և անպտղաբերութեան պատճառ լինում են կամ միջատներ, կամ սունկեր և կամ կրծող կենդանիներ։

Գրքոյկի մէջ նկարագրված են, օրինակ, խնձորենու թրթուրը, ճիճուն, ծաղկակերը, մետաքսաբերը, ցողունի թիթեռը, լուիճը, տիզը, ծառերի քոսը, ժանգը, բորբոսը, բծացաւը, կուչ գալը ևայլն։

Իւրաքանչիւր հիւանդութեան դէմ ցոյց են տրված նրանց դէմ մաքառելու միջոցները։

Նկարագրութիւնները մատչելի և ըմբռնելի դարձնելու նպատակով զետեղված են նկարներ՝ թւով 41։

Գրքոյկը կազմում է «Գիւղատնտեսի» գրադարանի առաջին համարը։

Նրան կազմելիս նիւթ են ծառայել Գրեբնիցկիի, Շրայների և ուրիշների աշխատութիւնները։ Հիւանդութիւնների մասը կազմել է Ս. Բաշինջաղեան։ Առաջաբանը գրել է Աւ. Սահակեան։

Գրքոյկը հրատարակված է այն գումարի հաշւով, որ նուիրաբերել էին ցնեցի Դ. Սարգսեանի ժառանգները յաւերժացնելու համար իրանց հօր յիշատակը, որը իր ժամանակին, քառասնական թւականներին, զբաղվել է այգեծառերի բարւոքման և շերամապահութեան զարգացման գործով։

Պէտք է յուսալ, որ «Գիւղատնտեսի» գրադարանը իր հրատարակութիւններով կը նպաստի լրացնելու այն պակասը, որ ունի հայ գործնական գիւղատնտեսական գրականութիւնը։ Ա. Ք.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ախալցխա, 4 դեկտեմբերի

Այսօր տեղիս հոգ. կառավարութեան մէջ քննվում էր տեղիս Գէորգ ք. Սիսակեանցի քաջագործութիւններից մէկը, որի համար վկայ էին կանչված բացի մի քանի հայերից և մի վրացի, որոնք մի առ մի պատմեցին իրանց տեսածներն ու լսածները։

Գործի էութիւնը այսպէս է։ Գէորգ ք. Սիսակեանցը եկեղեցու պարսպում, օրը ցերեկով, ժողովրդի ներկայութեամբ մի լաւ ծեծում է և փողոցային խօսքերով հայհոյում նոյն հոգ. կառավարութեան ծառային, որը 65 տարեկան մի ծերունի է։ Բարեբաղդաբար այդտեղ գտնվող մարդիկ հազիւ-հազ կարողանում են քահանայի ձեռքից ազատել յիշեալ ծառային, որը այդ քահանայի համար ոչ առաջինն է և ոչ էլ վերջինն է լինելու։ Ժողովուրդը շատ է հետաքրքրվում, թէ արդեօք հոգ. իշխանութիւնը ինչպէս է վերաբերվելու այդ գործին։

Գէորգ քահանայի հակաքահանայական ընթացքը իր անհաշտ և կռւարար բնաւորութեամբ շատ շատերին թերահաւատացրել է իրանց հոգ. մխիթարութեանց մէջ. նրա հետ խռոված մարդկանց թիւը մի քանի տասնեակների է հասնում, որոնց ամեն ժամանակ աշխատում է փնասել խօսքով և գործով։ Մինչև անգամ մայր եկեղեցու տէրն է դարձել. չէ ախորժում, երբ տեսնում է եկեղեցու մէջ կանգնած աղօթելիս իրան անդուրեկան մէկը. այդպիսի դէպքում նա իր դաժան նայուածքով կարծես ուզում է հալածել աղօթողին, և ի հարկէ միամիտ հաւատացեալը՝ յուսահատված՝ դուրս է գալիս եկեղեցուց։

Այդ քահանան միաբան էր տեղիս ս. Վարդանանց եկեղեցու, որտեղ հայրապետական օրէնքով մնալու էր մինչև մահը։ Բայց վերջին տարիներում կարողացաւ դուրս գալ յիշեալ եկեղեցու միաբանութիւնից, պատրուակ բերելով իր կեղծ հիւանդութիւնը, և լինել աւագ եկեղեցու ժամանակաւոր աղօթող. այո, կեղծ է, որովհետև չէ կարող մի հիւանդ քահանայ լինել գործակալ և շարունակ գիւղ ու քաղաք շրջել և միևնոյն ժամանակ կառավարել 300—400 ծուխ։ Վերջապէս մի մարդու քայլուածքը և արտաքինը միթէ չեն կարող ցոյց տալ, թէ արդեօք հիւանդ է թէ առողջ։ Բացե՛ի բաց պէտք է ասել, որ Գէորգ քահանան ամենաառողջներից մէկն է, իսկ եթէ պնդելու է իր երևակայած հիւանդութեան համար, օրէնքով պէտք է գործակալութիւնը վայր դնէ և 300—400 ծուխի կառավարութիւնը յանձնէ ուրիշ քահանայի՝ մինչև իր առողջանալը։ Մերձաւոր իշխանութիւնը այս բաները լաւ գիտէ և չը տեսնելու է տալիս։ Հէնց այդ պատճառով հասարակութիւնից մի ստուար թիւ բողոքելու է բարձր հոգ. իշխանութեան, որպէս զի հնար լինի յիշեալ քահանային հեռացնել մայր եկեղեցուց, որով հասարակութիւնը կը կարողանայ առանց յուսահատվելու աղօթել։

Յար. Մ. Ճարակեան, Ստ. Վեզիրեան, Մելքոն Ատոմեան, Յակ. Պետրոսեան, Սիմ. Աւագեան, Արտ. Անիսոնեան, Կար. Գրիգորեան, Գար. Գէորգեան, Խաչատրեան, Լ. Սարդարեան, Սահ. Դարբինեան, Խոր. Սուճեան, Յակ. Մատթէոսեան, Յովհ. Պետրոսեան, Մկ. Մատթէոսեան, Հ. Վարդանեան, Կար. Յակոբեան, Աւ. Ասլանեան, Նազ. Մինասեան, Արշ. Տօնտոնեան, Են. Գասպարեան, Յովհ. Ս. Գապոյեան, Յովհ., Գր. Պետրոսեան, Յովհ. Աղնաւուրեան, Յար. Անիսոնեան, Ս. Պ. Յովհաննիսեան, Մկ. Ն. Մոքոզեան, Գ. Քրդիեան, Ս. Մարքալեան, Յար. Մանուկեան։

—

Թիֆլիս, 26 յունվարի

Թոքախտի դէմ մաքառող Կովկասեան Ընկերութիւնը հետևելով այն սկզբունքին, որ հարկաւոր է գործը տանել համբերաշխ, ընդհանուր ոյժերով, և չը ցանկանալով ծանրանալ նուիրատուների վրա, բաց է թողել առանձին թերթեր (15 ր. արժողութեամբ), որոնք բաժանված են 75 մասի և իւրաքանչիւր մասի վրա տպված է. «Քար՝ Աբասթումանում շինվելիք սանատօրիայի համար։ Արժէ 20 կոպ.»։

Այդ թերթերի վրա համարներ են դրված. նրանք անուանի են՝ գանձապահ բժ. Ումիկեանի ստորագրութեամբ, Թիֆլիսի նահանգապետի կնիքով։ Ամեն մի տոմսակի (քարի) վրա դրված է նաև ընկերութեան կնիքը։

Ջնջված կամ պատռված տոմսերը (քարերը) կորցնում են իրանց ոյժը։

Այն անձինք, որոնք համակրում են Աբասթումանում շինվելիք սանատօրիայի գաղափարին, կարող են ստանալ այդ թերթերը վարչութեան բոլոր անդամների մօտ։

Չը ծախված թերթերը պէտք է վերադարձվեն մինչև ներկայ տարվայ մայիսի մէկը։

Անդամների անունները և հասցէները տպագրված են յայտարարութեան մէջ։

Վարչ. նախագահ՝ իշխ Մ. Թումանեան

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Թէհրան, 16 յունվարի

Մէջլիսի վերաբացումից յետոյ մինչև օրս պարսկական յեղափոխութեան ղեկավարները դեռ չեն կարողացել կանօնաւորել իրանց յարաբերութիւնները միմեանց հետ։ Մեծութեան և նախապատւութեան տենչը դեռ ևս զօրեղ է նրանց մէջ։ Գաղափարական յաղթանակի վեհ զգացմունքից և բռնապետական կարգերի տապալման քաղցրութիւնից յետոյ նրանք փոխանակ իրանց ամբողջ ոյժն ու մտաւոր կարողութիւնը կենտրօնացնելու երկրի տնտեսական և բարոյական բարգաւաճման վրա, ընդհակառակը իրանց գործունէութեան համար առանցք են ընտրել անձնական մանր-մունր հաշիւները, որով երկրի մէջ առաջ են բերել, այսպէս ասած՝ մի օրհասական դրութիւն, երբ վճռական խօսքը պատկանում է՝ զէնքին։ Արդարև, ներկայումս յեղափոխութեան յիշեալ ղեկավարների խճճված յարաբերութիւնները միայն զէնքը կարող է կանօնաւորել, որովհետև սահմանադրութիւնը, որի համար նրանք արիւն են թափել, խորթ է նրանց համար, և հայրենասիրութիւնը, որով նրանք մի ժամանակ վառվել են, օտար է նրանց, նաև սպառվել են նրանց՝ բռնապետութեան վրա քշող դրդապատճառները. իսկ անձնական մանր հաշիւների գործ տեսնելու ժամանակ, երբ երկիրը սկսում է անարխիայի ենթարկվել, միակ իշխողն ու խօսողը՝ զէնքն է։ Քաղաքի մէջ յամառօրէն խօսում են Սիփէհդարի հրաժարականի մասին, որը սակայն չէ ընդունվում մէջլիսի կողմից։ Խօսվում է նաև Սարդար-Ասադի հրաժարականի մասին։ Դրանց հետ զուգընթացաբար իրանց գործն են տեսնում նոյնպէս և արտաքին, դիպլոմատիական ձեռքերը, որոնք աւելի ևս են խառնշտանում և հրահրում երկրի ներքին կեանքի մէջ ստեղծված շփոթ և խառնակ դրութիւնը։ Պատկերը այդ կողմից՝ կատարեալ է։ Պարսկական գործերին մօտ կանգնած մարդիկ գրեթէ միաբերան վկայում են, որ եթէ ոչ երկրի, գոնէ քաղաքիս դրութիւնը խառն է։ Բայց թէ ինչ կողմից և կամ թէ ինչու համար,— ոչ ոք որոշ ոչինչ չը գիտէ։ Մասնաւորապէս մեզ՝ հայերիս եղել է կիսապաշտօնական և կիսաբարեկամական զգուշացում։

Գրեթէ ամեն տարի «ղաթլըի» օրը չար շշուկներ են պտտում, որ իբր թէ մոլեռանդ պարսիկ ամբոխը յարձակումն է գործելու հայերի վրա։ Այդ շշուկներից այս տարի ևս բաղդ ունեցանք լսելու։ Մեր ականջները արդէն վարժվել են նմանօրինակ լուրեր ընդունելու։ Բայց այս տարի... կովկասեցի թուրքերը, որոնք մի ժամանակ յեղափոխականներ էին և իրանց պետ Մէշեդի Ղասըմի առաջնորդութեամբ արշավում էին դէպի Թէհրան բռնապետութիւնը տապալելու համար, այսօր, կարծես, երես են դարձրել յեղափոխութիւնից և նոյն իսկ օրը ցերեկով փողոցում բաւական եռանդոտ յեղափոխական են սպանում ու ապաստան գտնում ռուսաց դեսպանատան մէջ։ Եւ ահա Մէշեդի Ղասըմի այդ խումբը «ղաթլըի» օրը շրջապատված էր կօզակներով։ Բայց որովհետև ներկայ կառավարութեան աչքում կօզակ զօրքն այնքան էլ վստահութիւն չէ վայելում կարգը պահպանելու գործում, ուստի Սարդար-Ասադը յիշեալ այդ խմբի հետ էր դրել նաև մեծ քանակութեամբ իր բախտիարցի ձիաւորներից։ Թէպէտև այս տարի բոլոր խմբերը շրջում էին կառավարութեան կողմից նշանակված ոստիկանների ուղեկցութեամբ, սակայն Մէշեդի Ղասըմի խմբի վրա կառավարութիւնը առանձին ուշադրութիւն էր դարձրել։ «Ղաթլըի» յաջորդ օրը Մէշեդի Ղասըմի խմբի հաւանական անկարգութիւնները զգալու էր դուրս եկել երևանցի Հէյդար-խանը իր խմբով, նա՝ որ մէկէլ տարի անաչող մահափորձ կատարեց նախկին շահի կեանքի դէմ։ Պարսիկների հասկացող մասը ամեն կերպ աշխատում է խուսափել օտար պետութեանց միջամտութիւնից։ Ս. Մուրադեանց

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

24 յունվարի

ՊԱՐԻԶ։ Երէկ Պորտէն-Մարտէն թատրօնում կայացաւ Ռօստանի «Շանտէկլէր» պիէսի ընդհանուր կրկնութիւնը։ Ժան Կօկլէն վարագոյրը բարձրացնելուց առաջ կարդաց նախաբան։ Առաջին և երկրորդ գործողութիւնների աջողութիւնը նշանաւոր է։ Մեծ տպաւորութիւն թողեց պիէսի սարքն ու կարգը։ Երրորդ գործողութիւնը սառն ընդունվեց։ Չորրորդ, վերջին գործողութեան մէջ շատ կան բանաստեղծական գեղեցկութիւններ։ Հասարակութիւնը բուռն կերպով բեմ էր հրաւիրում հեղինակին։ Թատրօնի առաջ, չը նայելով յորդ անձրևին, կանգնած էր ահագին ամբոխ։

ՆԱՇԻՐԸ։ Գէլիօպօլիսում սկսվեց աւիացիայի շաբաթ։ Առաջին փորձնական թռիչքի ժամանակ այրվեց Գօբրօնի աէրոպլանը։

ՌՕՍՏՕՎ ԴՕՆԻ ՎՐԱ։ Քաղաքային հասարակական բանկում հաշւապահը կեղծ չէկով ստացել է 54,000 ր.։ Հաշւապահը կալանաւորված է. նրանից խլեցին 2800 րուբլի։

ՀԷԼՍԻՆԳՖՕՐՍ։ Երեք ժամ կէսօրից յետոյ։ Ստացան սօցիալ-դէմօկրատներ 208,363, հին-ֆիններ 121,347, երիտասարդ-ֆիններ 74,984, շվէդներ 83,259, ագրարներ 41,661 ձայն։ Ընտրված են՝ շվէդներ 10, սօցիալ-դէմօկրատներ 9, հին-ֆիններ 3, երիտասարդ ֆիններ 1։ Շվէդները վաստակեցին մէկ, հին-ֆինները կորցրին մէկ տեղ։ Ընտրվածների թւում կան նախկին սենատօրներ Միխելին, Վրեդնէ, պրօկուրօր Գրօտէնֆէլդ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Սենատը բացատրեց, որ կայսրութեան մէջ ամեն տեղ բնակելու արտօնութիւնը չէ տարածվում այն հրէաների վրա, որոնք մասնակցել են Պորտ-Արտուրի պաշտպանութեանը կամաւոր դրուժինների կազմի մէջ։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՊԵՏԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԹԻՖԼԻՍԻ ՃԻՒՂԸ

Արժէթղթերի կուրսերը

26 յունվարի

I կ. ներք. փոխ. խ. տոմս.	448 ր.	— կ.
II » » »	359 ր.	— կ.
III Ազնուակ. բանկ. »	323 ր.	— կ.
4% Պետական րենտա	90 ր.	50 կ.
4% Պետ. Ազնւ. բանկ գր. թ.	98 ր.	50 կ.
5½% » » » »	92 ր.	75 կ.
4% » » » »	87 ր.	62½ կ.
3½% » » » »	83 ր.	12½ կ.
5% Գիւղ. հող. բան. վկ.	98 ր.	75 կ.
5½% » » » »	92 ր.	87½ կ.
4% » » » »	87 ր.	62½ կ.
5% Ներքին փոխառ. 1905 թ.		
I հրատ.	102 ր.	25 կ.
5% » II հրատ.	102 ր.	25 կ.
5% Արտաք. » 1906 »	102 ր.	25 կ.
5% » » 1908 »	102 ր.	25 կ.
4% Պետական գանձար.	100 ր.	— կ.

Օտարերկրեայ դրամների կուրսը

Լոնդոն 10 ֆ. ստեր.	94 ր.	70 կ.
Բերլին 100 մարկ	46 ր.	27 կ.
Պարիզ 100 ֆրանկ	37 ր.	63 կ.
Թաւրիզ 100 ղրան	19 ր.	— կ.
Կ. Պօլիս 1 լիրա	8 ր.	64 կ.

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ձմեռային երթևեկութիւն)
(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

—

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ՝ պօստաւոր գնացքը 11 ժ. 40 ր. գիշեր., Գանձակ է հասնում 6 ժ. առաւօտ., Եւլախ՝ 8 ժ. 9 ր. առաւօտ., Հաջի-Կաբուլ՝ 1 ժ. 12 ր. կէսօր., Բալաջարի՝ 4 ժ. 45 ր. ցերեկ., Բագու՝ 6 ժ. 9 ր. երեկ.։ Մարդատար գնացք № 6՝ 8 ժ. 11 ր. երեկ., Գանձակ է հասնում 2 ժ. 32 ր. գիշեր., Եւլախ՝ 4 ժ. 41 ր. գիշեր., Հաջի-Կաբուլ՝ 9 ժ. 12 ր. ցերեկ., Բագու՝ 2 ժ. 10 ր. ցերեկ.։ Խառն գնացք չորրորդ կարգի վագօններով, միայն ըստ հարկի կարևորութեան, 7 ժ. 3 ր. առ., Բագու է հասնում 11 ժ. 43 ր. կէսօրվայ։ Արագացված գնացք № 12՝ 10 ժ. 11 ր. երեկ., Գանձակ է հասնում 4 ժ. 13 ր. գիշեր., Եւլախ՝ 6 ժ. 8 ր. առ., Հաջի-Կաբուլ՝ 10 ժ. 32 ր. ցեր., Բալաջարի՝ 1 ժ. 45 ր. կէսօր., Բագու՝ 2 ժ. 20 ր. ցերեկ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ՝ պօստաւոր 1 ժ. 37 ր. գիշ., Ալեքսանդրօպօլ է հասնում 12 ժ. 21 ր. ցեր., Էջմիածին կայարան՝ 5 ժ. 30 ր. եր., Նախիջևան՝ 11 ժ. 30 ր. գիշ., Ջուլֆա՝ 1 ժ. 4 ր. գիշ.։ Մարդատար արագնթ.՝ 4 ժ. 20 ր. ցեր., Ալեքսանդրօպօլ է հասնում 3 ժ. 16 ր. գիշ., Էջմիածին՝ 8 ժ. 46 ր. առ., Ուլուխանլու՝ 9 ժ. 16 ր., Երևան՝ 10 ժ. 14 ր. առ., որից դէնը այլ ևս չէ գնում։ Խառն գնացք չորրորդ կարգի վագօններով՝ ըստ հարկի կարևորութեան՝ 5 ժ. 8 ր. ցեր., Ալեքսանդրօպօլ՝ 6 ժ. 56 ր. առ., որից դէնը այլ ևս չէ գնում։

ԲԱԹՈՒՄ՝ մարդատար № 7՝ 8 ժ. 10 ր. երեկ., Բաթում է հասնում 9 ժ. 42 ր. առ.։ Պօստայինը՝ 9 ժ. 42 ր. երեկ., Բաթում է հասնում 11 ժ. 48 ր. առ.։ Մարդատար № 5՝ 1 ժ. գիշ., Բաթում է հասնում 2 ժ. 8 ր. ց.։

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ՝ պօստաւոր գնացքը 8 ժ. 42 ր. առաւ., մարդատար № 5՝ 12 ժ. 11 ր. գիշ., Արագացված № 11՝ 10 ժ. 47 ր. առ.։ Վերջին գնացքը չէ գնում Բաթում։

ԲԱԹՈՒՄԻՑ՝ մարդատար № 6՝ 7 ժ. 21 ր. երեկ., պօստայինը՝ 10 ժ. 40 ր. երեկ., մարդատար № 8՝ 12 ժ. 17 ր. կէսօրին։ Վերջին գնացքը Բագու չէ գնում։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ՝ պօստաւոր 6 ժամ 19 ր. առ., մարդատար-արագնթաց՝ 6 ժ. 44 ր. երեկոյեան։

ԱԼԵՔՍԱՆԴՐՕՊՕԼԻՑ խառն գնացք 4-րդ կարգի վագօններով՝ 4 ժ. 48 ր. գիշերվայ։

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
ՆԵՐՔԻՆ ԵՒ ԵՐԵԽԱՅՑ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
առանձնապէս ՍՏԱՄՈՔՍԻ և ԱՂԻՔՆԵՐԻ հիւանդութիւններ։
Ընդունելութիւն ամեն օր { 5—7 ժ. երեկ.
Միքայէլեան փող., № 36. Տէլէֆօն № 388.
(օ. մ.) 1216. 100—63

ԲԺՇԿԱՊԵՏ
ԱՒԵՏ. ԲԱԲԱՅԵԱՆՑ
Մնալով այս ձմեռ Թիֆլիսում, ընդունում է Սեռին եւ ջղային հիւանդներ։
Ցերեկվայ 1—3 ժ., երեկոյեան 6—7 ժ.
Լերմօնտօվսկայա փողոց տուն 21, բն. № 2.
Տէլէֆօն № 221.
(օ. մ.) 1213. 35—22

ԲԺԻՇԿ
Խ. Բ. ՄԵԼԻՔ-ԷՅՆԱԹԵԱՆ
Մասնագէտ սիֆիլիս, վեներական, միզասեռական և կաշուի հիւանդութիւնների։ Հիւանդների ընդունելութիւնը՝ առաւօտ. ժամը 9-ից մինչև 10-ը, երեկոյեան ժամը 5-ից մինչև 7-ը։
Կռէնիեվսկայա փ., № 6, «Վէտցել» հիւրանոցի մօտ։ (Ե. Հ. Շ.) 955. 100—49

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ուղարկում եմ պօստով, վերադիր վճ., առանց կանխավճ. «ՏՐԻՈՒՄՖ» չէվիօտի ամբողջ կտոր, 4¼ արշ., տղամարդկանց լրիւ
ՁԳԵՍՏ 2 ր. 75 կ.
2ը նշւած ծայրայեղ էժանութեան՝ «Տրիումֆ» կտորը բրդից է (ոչ բամբակից) և ունի բոլոր յատկութիւնը լաւ կտորների, միանգամայն ամուր է, գործնական և շքեղ։ Գոյները՝ սև, մուգ-կապոյտ, շագանակագոյն, ձիթագոյն։ Ճանապարհածախքը 55 կ.։ Երեք և աւելի կտոր բերել տալուց՝ ճանապարհածախքը իմ հաշւին։ Պատուէրները հասցէագրել.
г. Лодзь, № 72 к., фабриканту
ЗИГМУНТУ РОЗЕНТАЛЮ.
Թղթակցութիւնները ռուսերէն։
(27,3,16) (B. 2773) 42. 3—1

ՀԱԶՈՒԱԳԻՒՏ
ԴԷՊՔ
7 ՌՈՒԲԼԻ 25 ԿՈՊԷԿՈՎ
ուղարկում ենք ձեզ 2 զգեստ, «ԱՆԳԼԻԱԿԱՆ ՏՐԻԿՕ» բրդից, ամուր և մօդային կտոր, 2 արշ լայն., 4¼ արշ. երկար. տղամ. ամբողջ զգեստի համար և 8 արշ. «ՏՐԻԿՕ ՊԱՆԱՄԱ» կանանց ամուր և էլեգանտ զգեստի համար, հանդերձ ճանապարհածախքով (առանց կանխավճ. և բևեկ). չը հաւանված դէպքում ֆաբրիկան փողը վերադարձնում է։ Վերադիր վճարի համար աւելորդ հաշւվում է 16 կոպ., իսկ Սիբիր 85 կ. աւելի։ Հասցէագրել՝ Въ фабрику А. КИВМАНА, Лодзь № 43.
Թղթակցութիւնները ռուսերէն։
(27, փ. 3.) (B. 6411) 74. 3—1

2 ՌՈՒԲԼՈՎ ՊԻՋԱԿ
Այսպիսի չլսված էժան գնով ուղարկում եմ պատրաստի, կարված, միանգամայն գործն. և դեղ. պիջակ՝ տարվայ ամեն սեզօնին յարմար։ Նոյնպէս ուղարկ. եմ պատրաստի շալվարներ, կարված մօդային, գործն. և ամուր կտորից՝ 2 ր.։ Պիջակի կամ շալվարի ճանապարհծ. 35 կ.։ 3 և աւելի ապրանք բերել տալուց՝ իմ հաշւին։ Ուղարկ. եմ վերադիր վճ., պօստով, առ. կանխավճ., երաշխաւորութեամբ եթէ չը հաւանվի՝ յետ եմ ընդունում։ Պատուէրները հասցէագրել. фабрик. З. Г. РОЗЕНТАЛЮ, г. Лодзь, № 216.
Թղթակցութիւնները ռուսերէն։
(ա. օ.) (B. 2782) 44. 33—4

ПРОДАЕТСЯ вполнѣ обуродованная
РИСОВАЯ МЕЛЬНИЦА
Способная выработать отъ 200—300 пудовъ чалтыку или 110—130 пудовъ чистаго рису въ сутки; можетъ быть устаровлено въ любомъ мѣстѣ. Видѣть можно въ маслобойномъ заводѣ Карлинскаго, Тифлисъ, Авчальская ул., домъ Корганова № 59. Тутъже продаются 2 МОТОРА НЕФТЕНЫЕ, одинъ 10 силъ, а другой 5 силъ.
(23,25,27,29) 82. 4—3

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ! ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ! ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ!
կամէ իւրաքանչիւր, ով բերել կը տայ սորև յիշված զարնիտուրը՝ բաղկացած 18 առարկ., օգտաւէտ եւ հաս-հաս առարկաներից— մինչև օրս չլսված գնով—
ՄԻԱՅՆ 4 ր. 85 կ. (փոխ. 15 ր.)
1) Տղամ. գրպ. գեղ. բաց ժամաց. անգլ. խակական սև պողպատից, ամուր շինուածք, անկեր (ոչ ցիլինդր), ընթացքը քարերով, շղ սեղմվող զսպանակով, փոքրից դէրծ պահող ապակով, ձայնաւոր և մինչև րօպէները ստուգված ընթացքով։
2) Էլեգանտ շղթայ խակակ. նիկէլից, երկար կամ կարճ։
3) Բրելօկ նոյն մետաղից։
4) Ժամաց. գողացվելուց պահպանող իր։
5) Իսկական ոսկուց՝ 56 յարգի մատանի (տես նկարը) արհեստ. կեղծ ադամանդով։
6) Ամերիկ. պատենտ. անվնաս ածելի «Սօլինգէն» (տես նկ.), որով իւրաքանչիւր, նոյնիսկ մթութեան ժամանակ, կարող է ինքն իրան սափրել։
7) Նիկէլեայ թառ։
8) Նիկէլեայ վրձին։
9) Կաշուէ պորտմօնէ փողի համար, 6 բաժ. (առ. բաժ.՝ ոսկու համար), արտասահման. խակակ. կաշուց կաշուց և մետաղիկ. փականով՝ տարածվելով իր մէջ գտնուող տեղ կնիքի համար։
10) Կաուչուկէ կնիք պատուիրողի անուն-ազգանունով։
11) Միսրուակ թանաք կնիքի համար։
12) ՆՈՐՈՒԹԻՒՆ! Տնային պատենտ ապարատ, որ պարունակում է մօտ 200 տառ, թւանշ. և կէտադր. նշ., տպելու համար այցետոմսեր, բլանկներ, ծրարներ և այլն։
13) Տառերի համար ունելիք։
14) Տպագրական մամուլ։
15) Բարձ ապար. մշտական մուրի համար։
16—18) Տուալէտային շքեղ նէսսէսէր. շուրջը սարքի խոշուց, պարունակելով իր մէջ յղկված հայելի, սանր ու պրիբոր՝ ատամներն ու եղունգները մաքրելու համար։
Այդ բոլորը միասին՝ փոխ. 15 ր. միայն 4 ր. 85 կ.։ Կանացի բաց ժամաց. 17 յակինթներով 5 ր. 35 կ.։ Տղամ. և կան. փակ (խուփ) ժամաց. (գիլ.) 17 յակ. 5 ր. 85 կ.։ Ուղարկ. ենք շուտափոյթ, առաւէլն ստանալուն պէս. երաշխաւորելով ճիշդ ընթացքի համար 6 տարով, առանց կանխավճարի։ Ճանապարհածախքը 50 կ., Սիբիր և Միջին-Ասիա 90 կ.։ Պատուէրները խնդրում ենք հասցէագրել.
Въ „БАЗАРЪ НОВОСТЕЙ". Варшава, Грибная пл. 6—69.
P. S. Խնդրում ենք կատարեալ հաւատ ընծայել, քանի որ ուղարկ. ենք լաւ յատկ. ապրանք, որի համար և ստանում ենք բազմաթիւ շնորհակալ. և գովաս. նամակներ։
Թղթակցութիւնները ռուսերէն։
(27, փ. 10, 24, մ. 10, 25, ապ. 7) (B. 4348) 49. 6—1

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲ. ՄԻՆԻՍՏՐ. ՏՆՕՐԻՆՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՅ ԳՏՆՎՈՂ
Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ
Թիֆլիս, Միխայլեան պր. 24/4,
Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտր. կրթութիւն։
Դասընթացքն աւարտողներին տրվում են ատեստատներ։
ԳՈՐԾՆԱԿԱՆ զբաղմունքները կատարվում են կուրսերում՝ Լոնդոնի Pitman և Պարիզի Pigier դպրոցների ձևով կազմակերպված Muster-Comtori-ում։ Նիւթերն առնվում են րէալ կեանքից։ Առարկաներն են. ա) պարտադիր. 1) Հաշւապահութիւն (պարզ, իտալ., գերմ., ֆրան., ամերիկական, բանկային և գործարանական, 2) Առևտրական թւաբանութիւն, 3) Քաղաքատնտեսութիւն, 4) Օրէնսգիտութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանօնադրութիւն), 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Թւաբանութիւն համրիչի վրա, 7) Վայելչագրութիւն, արագագրութիւն (ամենավերջ ձեռքի ուղղումն). բ) ոչ պարտադիր. 1) ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐ, 2) սղագրութիւն, 3) դակտիլօգրաֆիա (րեմինգտօն և ուր.) և 4) առևտր. թղթակցութիւն օտար լեզուներով։ Զբաղմունքները կատարվում են և դաս-դաս։ Ունկնդիրների թւի շատութեան պատճառով բացվում է զուգընթաց բաժանմունք։ Ունկնդիրների թիւը սահմանափակված է։ Պարապմունքների սկիզբը յունվարի 15-ին։ Խնդիրների ընդունելութիւնը առ. 10—12 ժ. և եր. 4—7 ժ.։ Ծրագիրը և կանօնները ուղարկվում և տրվում են ձրիաբար կուրսերի շէնքում։
Կուրսերի հիմնադիր՝ առևտր. գիտութեան կանդիդատ՝ Տ. ՓԻԼՕՅԵԱՆ
(ա. օ.) 1387 20—20

Типографія „Экономія" Большая Ванкская № 3.